

## ԽՈՐԵՆ ՍՐԳԵՊԻՍԿՈՊՈՍ ԴԱԼՓԱՅԵՄՆԸ ԵՒ ՆԱԼԲԱՆԴԵՄՆՑԻ «ԸՂՑՄԻՔԸ» \*)

ԴԼՈՒԽ Բ.

Պօլիսը Խորէնի ծննդավայրն էր. ալնտեղ էին ապրում նորա ընտանիքը, ազգականները, ալնտեղ էր ապրում և նորա սիրելի Վարդուհի Քոյլը, որ ամուսնացած էր Պետրոս բէլ Մարկոսեանի հետ։ Բնական էր, ուրեմն, այն սէրը, որ նա տաճում էր դէպի Բոսֆորի գեղածիծաղ ափունքը, բնական էր, որ նա ամեն մի յարմար միջոցում այցելում էր իւր ալդ երկրորդ հալընիքը, երկար միջոցներով ապրում էր ալնտեղ և առանց հարկեցուցիչ պատճառի չէր ուզում բաժանուել նորանից, բնական էր, որ նա իւր բանտառեղծութիւնների մէջ իրան «Հէգ պանդուստ» և իւր քնարը «պանդխտի քնար» էր կոյում, բնական էր, վերջապէս, որ նա 64 թուկին թողնելով կամ ստիպուած լինելով թողնել թէոդոսիան, մեկնում է Պօլիս և ալնտեղ է հաստատում իւր մշտական բնակութեան տեղը, մտնելով Տաճկահայոց կուսակրօն հոգեսրականութեան շարքն, ազգայն պատրիարքարանի իրաւասութեան ներքոյ։

Թող տարօրինակ չժուկի այն հանգամանքը, որ մենք ալստեղ խօսում ենք մի հայ վարդապետի, մի որ և իցէ տեղ մշտական բնակութիւն հաստատելու մասին, մի հայ վարդապետի, որ բնականապէս մշտական բնակութեան տեղ էլ չպէտք է ունենալ, որ իւր բնակութեան տեղ պէտք է համարէ ամեն մի տեղ, որտեղ միայն հայ եկեղեցի, հայ ժողովուրդ և հայ վանք կայ։ Քայլ Տաճկահայոց կեանքի պատմական հանգամանք-

ներն այնպէս են կտղմակերպուել, այնպէս են յարմարուել, որ հոգևոր կենդրոնական վարչութեան տեղը դարձել է բուն հայրենիքից հեռու մի քաղաք, և, որ գլխաւորն է, հայ վարդապետների ու եպիսկոպոսների մէջ առաջ է եկել մայրաքաղաքում, թէ գաւառներում պաշտօն վարելու ցաւալի խնդիրը։ Մի տեղ — գաւառներում խառնիճաղանջ տգէտ ամբոխ, բազմաթիւ տղալին կնճռոտ խնդիրներ, տգէտ, անսսանձ, վայրենի հակումներով ղեկավարուող տէրութենական պաշտօնեաների հետ յարաբերութիւն, նիւթական անսապահով դրութիւն, անշուք, լի նեղութեամբ և տանջտնքով կեանք և մի տեսակ անձնագոհութիւն, միւս տեղ — Պօլսում համեմատաբար աւելի քաղաքակրթուած ժողովուրդ, մայրաքաղաքներին յատուկ յարմարութիւններ, շքեղ, փալլուն և նիւթականապէս աւելի ապահովուած կեանք, առանց տանջանքի, առանց նեղութեան և, ի հարկէ, առանց անձնագոհութեան։

Պօլսում ապրելը հայ վարդապետների ու եպիսկոպոսների համար, բայցի վերոլիշեալ յարմարութիւններից, ունի և մի մեծ առաւելութիւն, նոցա գործունէութիւնն ու պաշտօնավարութիւնն արդտեղ միշտ հրապարակի վերալ է, միշտ լրագրութեան քննադատութեան և գովարանութեան նիւթ է լինում, հոչակւում, միշտ ազգալին վարչութեան, պատրիարքարանի և ժողովրդի ազգեցիկ մասի աչքի առաջն է, ուրեմն, և աւելի շանս կայ արդտեղ առաջադիմելու, գնահատուելու և հետզհետէ եկեղեցական նուիրական ամենաըարձը աստիճաններին՝ եպիսկոպոսութեան, արքեպիսկոպոսութեան, պատրիարքութեան և մինչև իսկ կաթողիկոսութեան հասնելու, ազգային եկեղեցական վարչութեան մէջ էր մեծամեծ պաշտօնների՝ կրօնական ժողովի անդամութեան, պատրիարքի փոխանորդութեան, թաղական եկեղեցիների քարոզչութեան, զանազան կրօնական ազգալին հաստատութիւնների նախագահութեան և միւս բարձր պաշտօններին տիրանալու։ Այն ինչ գաւառներում նոցա գործունէութիւնը չի նկատուում և յաճախ նոցա առաւելութիւնները ծածկուում են, իսկ պակասութիւնները չափազանցրած ծաւալով ու ձեռվ նոցա

Հակառակորդների ձեռքով դրուած ամբաստանագրերի միջոցով հասնում, լցնում են պատրիարքարանի դիւանը, չենք ասում արգէն այն, որ շատ անգամ արժանաւոր հոգեւորականները հէնց նոյն տէրութեան ձեռքով հեռացուում են գաւառներից և պատժի ենթարկուում, որով և արգելք է դրուում, նոցա լառաջադիմելու առաջն առնում:

Մենք հեռու ենք այն մտքից, որ կարծենք, թէ գաւառներից խուսափող և Պօլսում պաշտօնավարող մեր կուսակրօնները միայն իւրեանց անձնական շահի վերալ են մտածում, թէ նոքա միայն կարիեր անելու նպատակով ու մտքով են հոգեւորական դարձել, ոչ նոցա մէջ էլ եղել են և կան շատերը, որոնք սրտացաւ են եղել և են ընդհանուր շահերին, որոնք մեծամեծ ծառալութիւններ են մատուցել և մատուցանում եկեղեցուն և ազգին, բայց չենք կարող ալստեղ մատնացուց չանել այն մեծ տարրերութեան վերալ, որ կայ դոցա և գաւառներում պաշտօն վարողների մէջ նոյն եկեղեցուն ու ազգին ծառալութիւն անելու տեսակետից: Ալնտեղ այն հեռաւոր անկիւններում փոխանորդն ու առաջնորդը, վանահայրն ու գործակալը նոյն վիճակին են ենթարկուած, որին և ժողովուրդը. նոքա ամեն բանում իւրեանց ժողովրդի հետ են, նոցա վշտերին վշտակից են, նոցա ուրախութիւններին ուրախակից, չենք ասում արգէն այն, որ նոքա իբրև ժողովրդի առաջնորդ ու ներկալացուցիչ և ազգալին գործերի կառավարիչ լաճախ նոյն իսկ տւելի են տանջուում, շարչարուում, քան թէ նոյն իսկ ժողովուրդը, մի հանգամանք, որ մայրաքաղաքում չկալ և չի էլ կտրող լինել:

Պօլսում բաւական է, որ հոգեւորականն իւր սանին յատուկ բարոյականն ունենալ, չափաւոր ընդունակութեան տէր լինի, շափաւոր գիտութիւն ձեռք բերած լինի և մի յալտնի աստիճանի եռանդ ու ձգտումն ցոյց տալ գործելու, հասարակաց շահերին ծառալելու, — և տհանական պատրաստ է, հոչակը շատ անգամ մինչև իսկ չափազանցրած ձեռք ընդհանրացել է և, ուրեմն, կարիերն արուած է և հոգեւորականն առաջացած ու ա-

ռաջանալու շաւղի վերալ է։ Մի ընդհանուր ճշմարտութիւն է, որ տատասկոտ դաշտում, առապարներում ու խորտ ու բորտ տեղերում առաջ գնալն աւելի դժուար է, քան թէ ծաղկաւէտ մարգերում, լիութեան ու առատութեան մէջ։ Հասկանալի է, ուրեմն, որ այսպիսի հանգամանքներում մեր տաճկահայ կուսակրօն հոգեւորականութիւնը հետզետե պիտի հաւաքուէր պատրիարքարանի չորս կողմը, կենդրոնանար Պօլսում և սակաւ լինէր նոցա թիւը, որոնք ցանկանալին գաւառներն երթայու եկեղեցական վարչական պաշտօն վարելու։ Ամեն ժամանակ, ամեն տեղ և ամեն ազգի ու հասարակութեան մէջ անձնուէր ու անշահասէր մարդկանց թիւը շատ սահմանափակ է եղել։ Հայ ազգն էլ իւր հոգեորականութեամբ ալդ ընդհանուր կանոնից բացառութիւն չի կազմել։

Խորէն հար սուրբն իւր խառնուածքի ու բնաւորութեան յատկութեամբ, ըստ ամենայնի, պատկանում էր Պօլսաբնակ հոգեորականների շարքին, ուստի հէնց սկզբից, Թէսոդոսիալից գալուն պէս, նա անցնում է նոցա կարգ, որոշելով ընդ միշտ մնալ Պօլսում։ Հոգու մեղք է ասել, թէ նա ազգասէր չէր, չէր սիրում իւր ազգային եկեղեցին և փախչում էր հայութեան համար աշխատելու գործից, ոչ. նա ջերմ կերպով սիրում էր իւր հայրենիքը, իւր եկեղեցին, իւր լեզուն ու գրականութիւնը, բայց նորա ալդ սէրը մի բոլորովին վերացական, պղատոնական բան էր. նա ոչ մի շօշափելի բանով չէր արտալայտում իւր ալդ սէրը. նա բուն գործը, աշխատանքը թողնում էր, կամ, լաւ է ասել, ուզում էր, որ ուրիշներն անեն, իսկ ինքը միշտն սիրում էր երգել, գրուատել, արտասուք թափել, սրտառուչ դամբանականներ խօսել, ազգալին հանդէսների մասնակցել, գեղեցիկ, ոգեսրիչ քարոզներ խօսել, և ալլն և ալլն։ Այս պատճառով էլ ահա նորա գրուածները մեծ մասով վերացական են, մեծ մասով սրտի, զգացմունքի զեղմունքով այն աստիճան լորդուած բաներ են, որ կարծես, ինքը հեղինակն էլ խեղդւում է իւր ալդ զեղմունքի մէջ։ Բայց ափսոս, ալդ բոլորը խօսքեր են, ճիշտ է, գեղեցիկ, սիրուն խօսքեր, բայց

ապարդիւն, աննպատակ և միայն դատարկ խօսքեր։ Ալդ  
նորա մանկութեան թեթև ու անտարբեր դաստիարա-  
կութեան և վանական կաթոլիկ կրթութեան հետեանքն  
էր։ Ալդպէս են եղել Մխիթարեաններից շատ շատերը-  
նոքա իւրեանց ամբողջ կեանքում հայրենիքի անունով  
են երգուել, հայրենիքի հողն ու ջուրն երգել ու գո-  
վարանել, բայց իւրեանց մտքով էլ չեն անցկացրել մէկ  
օր իւրեանց ասածները, գրածները և քարոզածները  
գործով էլ արդիւնաւորել։ Ալդպէս են եղել Զախա-  
խեանները, Բագրատունիները, Հիւրմիւգեանները, Ալտը-  
նեանները և, ցաւ է ասել, մինչև իսկ Հայոց նահա-  
պետ պատկառելի Ալիշանը, որ իւր երկար կեանքի ըն-  
թացքում մէկ անգամ էլ չկարողացաւ այցելել, տեսնել  
իւր ալնքան սիրած հայրենիքը և մօտից շօշափել նո-  
րա վէրքերը։ Մկրտիչ Պէշեկիթաշլեանի սէրն էլ դէպի  
հայրենիքը բոլորովին վերացական էր, չէ որ նա էլ Մխի-  
թարեանց աշակերտներից էր։ Սրբուհի Տիւսարն էլ այդ-  
շարքին էր պատկանում. վերջապէս, ալդ մի մեծ դըպ-  
րոց էր, որի գլուխ կանգնած էին Մխիթարեանք, իսկ  
միւսները նոցա մերձաւոր աշակերտները և հեռաւոր  
հետեւողներն էին։

Ճիշտ է, ալդ դպրոցը տուել է մեր գրականութեան  
բազմաթիւ քանքարաւոր և հայրենասէր հեղինակներ,  
բայց նոքա բոլորեքեան էլ իւրեանց գրուածներում վե-  
րացական հայրենասէրներ են եղել, գործնական կեան-  
քից խուսափող, ախ ու վախով, վիշտ ու հառաչանքով  
բաւականացող։ Մեզ կարող են ասել, թէ ամեն տեղ,  
ամեն ազգի ու հասարակութեան մէջ էլ եղել է մի  
այնպիսի ժամանակամիջոց, երբ խօսելու, ոգևորելու  
կարևորութիւն է եղել միայն, իսկ գործելու համար  
հողը տակաւին պատրաստ չի եղել։ Մխիթարեանց դըպ-  
րոցը մեր կեանքում նախտապարասատողի դեր է կատա-  
րել։ Այս, ալդ ալդպէս է և լաւ է, եթէ միայն նոցա  
խօսքերին հետեւէր և գործն ու քարոզածը գործնակա-  
նապէս արդիւնաւորելու հանգամանքը։ բայց դժբաղ-  
դաբար երբ խօսելու միջոցն անցել է, երբ հասել է  
գործելու ժամանակը, նոքա մնացել են դարձեալ նոյն  
ախ ու վախ քաշողը։ Նատ մօտ անցեալում, երբ մեզ

համար մահուան և կեանքի խնդիր էր վճռուում, երբ շատերը նոյն իսկ Միիթարեանց հեռաւոր հետևողներից թողին իւրեանց հառաջանքները և նետուեցին կեանքի գործունէութեան ասպարէզը, Միիթարեանք իւրեանց մերձաւոր աշակերտներով մնացին և մնում են լոկ հանդիսատես և շարունակում են իւրեանց «երեմիտանները»<sup>5)</sup>: Արդարութիւնը պահանջում է ասել,

<sup>5)</sup> Աւշաղրութեան արժանի հանգամանքն այն է՝ որ Միիթարեանք իւրեանց հայրենակիցներին և հայրենիրին հասած ամենամեծ աղէտների ժամանակ միշտ անտարբեր են մնացել. նորա միշտ «ժամանակնիմ չար է» ասելով ձայն չեն հանել յօգուտ իւրեանց թշուառ եղրայրակիցների. նորա իւրեանց տպագրական օրգաններով չեն բողոքել, չեն պաշտպանել իւրեանց հայրենիքի շահերն Եւրոպայի առաջ, թէկ ինքեանք Եւրոպայի սրտում ապրելով և կաթոլիկ լինելով, գուցէ, կարողանային ազգել կաթոլիկ աշխարհի կարծիքների վերայ. Այս մասին տես հանդուցեալ Գ. Արծրունու «Միիթարեան միարանութիւնը և Հայերը» Խորագրով առաջնորդողը «Մշակի» 1878 թուի 81 համարում:

Ներկայումս մի փոքրիկ փոփոխութիւն է նկատուում Միիթարեանների գործողութիւնների մէջ. Թէկ չնդյեանները շարունակում են իւրեանց կորստարեր առաքելութիւնները, բայց և նշյն ժամանակ Միիթարեան երիտասարդ սերնդի մէջ կարծես, երեան է դալիս ձգտումն դուրս դալու աւանդական բուտինայից և ծառայելու ընդհանրութեան շահերին. Միիթարեանները սկսել են հրատարակել «Գեղունի» անունով «Բաղմալէպի» պատկերազարդ յաւելուածը, որի վաճառումից գյացած գումարը յատկացրել են Հայոց որբերի օգտին առանց կրօնի խարութեան. Հ. Ս. Երեմեանը «Բաղմալէպի» ներկայ իմրագիրը, կարծես, աշխատում է Հայոց այդ հնօրեայ ամսագիրը դարձնել հասարակութեան բերան, թարմութիւն ու կենդանութիւն ներշնչել նորա մէջ և ծառայեցնել ազգի շահերին. Մենք ի սրտէ ողջունում ենք Միիթարեան հայրերի այդ բայլը և ցանկանում ենք նոցա այդ գործունէութեան յարատեալթիւն. Ժամանակ է հասկանալու, որ կընքը մարդուս հոգու, սրտի և համոզմունքի խնդիր է և այս կամ այն դաւահ նութեան ձշմարիտ կամ թիւր լինելու դատաւորը մենք մաշ-

որ Խորէնն իւր կեանքի վերջին տարիներում շատ էր փոխուել. Ռուս Տաճկական պատերազմը և դորա ազգեցութեան ներքոյ Տաճկահայոց մէջ առաջ եկած շարժումները, ձգտումները և ազգալին հոսանքը նորան ևս ոգեսորեցին, նորան ևս տարան: Ամենքին լայտնի է, թէ նա ի՞նչ մեծ դեր խաղաց վերոլիշեալ պատերազմի վերջանալու և բերլինի վեհաժողովի ժամանակները. թէ գործելով, թէ քարոզելով և թէ գրելով, Եւ զարմանալին այն է, որ այդպիսի կենդանի գործունէութեան ազգեցութեան ներքոյ նորա խօսքերն էլ, գրածներն էլ արդէն ուրիշ բնաւ որութիւն, ուրիշ գործ էին կրում, ուրիշ համ ու հոս ունէին: Բայց դժբաղդաբար արդէն ուշ էր. նա արդէն կազմակերպուել էր, ամրացել էր լիշեալ ուղղութեան մէջ և կարճ ժամանակամիջոցում գժուար էր նորան իսպառ փոխուել, նամանաւանդ որ կարճատե ոգեսորութեան ժամանակներին էլ լաջորդեց մեր կեանքում հիսաժափումն և մի տեսակ ապատիա:

Խորէն վարդապետը լամառութեամբ մերժում էր այն գաւառների խնդիրքը, որոնք ընտրում և կամենում էին նորան իրանց աւաջնորդ տեսնել: Նորան ընտրում և հրաւիրում է առաջնորդ Իզմիրը, բայց նա նոցա ընտրութիւնը չի ընդունում և եկած հրաւիրակներին քաղաքավարութեամբ ճանապարհ է դնում. նա մերժում է Ծիգրանակերտցւոց, նոյն նպատակով նորան արած առաջարկութիւնը, իսկ Ռօդոստացւոց, որոնք հետեւով

---

կանացուներս չենք, այլ Աներին-Դատաւորը: Այն էլ բաւական է, որ մենք կարողանանք պահպանել մեր հայրենական նուիրառական աւանդները և չխրամատենք մեր միութեան միակ ցանկը—ազգային եկեղեցին: Կրկին և կրկին շեշտում ենք, որ հասարակ ժողովուրդը, տգէտ ամրոխը միայն դաւանութեամբ է հասկանում, դաւանութեամբ է ջոկում ազգութիւնները: Հայադաւան, Հայ-կաթոլիկ, Հայ-բողոքական, Հայ-հոռոմ նոր հասկացողութիւններ են, զարդացած դասից գործածութեան մէջ մըտցրած. ամրոխը միայն Հայադաւաններին է հայ համարում; իսկ միւսներին—ոչ, այլ կաթոլիկ, Փռանկ, լեմսէ, Փառմասօն, և այլն և այլն:

Խզմիրցւոց և Տիգրանակերտցւոց օրինակին, նոլնպէս կամենում են նորան իրանց առաջնորդ ունենալ, այնպիսի պարմաններ է առաջարկում, որ համա- հաւասար է լինում մերժման: Խորէնին ձեռք չէր տալ թողնել Պոլիսը և գաւառներն երթալ, որով- հետեւ նա միտք էր դրել կարիեր անելու, հաս- նելու այն մեծամեծ պաշտօններին և հոգեռական- նուիրական աստիճաններին, որ միայն կարող էր տալ նո- րան Հայոց եկեղեցին, իսկ այդ նպատակին կարելի էր միայն հասնել, մնալով մայրաքաղաքում և ամենքի աշ- քի առաջ գործելով: Դորա համար չէր պակասում նո- րան ոչ ջանք ու աշխատանք և ոչ գիտութիւն: Նա դո- րա համար, կարծես, բոլոր պահանջուած յարմարու- թիւններն ունէր. նա և՛ պերճախօս քարողիչ էր, և՛ օտար լեզուներ գիտէր, և կրօնական ու արտաքին գի- տութիւններին հմուտ էր, և բարձր հոգեռոր պաշտօն- ներին յատուկ գիւանագիտական նրբութիւնները գիտէր և, վերջապէս, ամեն մի վարչական անձի համար հար- կաւոր քաղաքավարական կանոններին ծանօթ ու տեղեակ էր: Բայց, զարմանալի բան, նորան այդ չաջողեց. նա միշտ իւր բոլոր կեանքի ընթացքում աշխատեց վեր բարձրանալ և ալստեղ բարձրութիւնից հրամալել, իշ- խել, ղեկավարել, բայց միշտ էլ ցած իշաւ, ինչպէս այդ պատահում է ամեն մէկի հետ, որ թեք մակերեսութիւն վերալ է կանգնած լինում, որ իւր ոտքի տակ հաստա- տուն յենարան ու հող չի ունենում, որ, վերջապէս, աւազով ու խճով ծածկուած սարի վերալ բարձրացող մարդու պէս անդադար վերելակում, բայց և անդադար աւազի ու խճի հետ միասին սահում, վալը է ընկնում և երբէք գագաթին չի հասնում:

Պոլսում հաստատուելուն պէս, Խորէնը 1864 թուին կարգուեց Ինըրալի քարողիչ, բայց մի քանի ժամանակից յետու, թաղականների մէջ նորա առթիւ ծագած խռո- վութիւնների պատճառով ստիպուեց հրաժարուել. 1867 թուին նա Պէշիկթաշի քարողիչ անուանուեց և դորա հետ միասին նոր թաղի դպրոցների վերատեսչութեան պաշտօնն ստանձնեց, բայց մի քանի ամսից նա հարկա- գրուեց և այդ պաշտօնները թողնել, որովհետև թաղեց-

ւոց խռովութիւններն այնքան սաստկացան, այնքան սուր բնաւորութիւն ստացման, որ անբաւականները մինչև անգամ քարոզչի և վերատեսչի պաշտպան «Մասիս»-ի խմբագրի տան պատուհանների ապակինները կոտրեցին. 1876 թուին հակախրիմեանական կուսակցութեան շնորհիւ և օգնութեամբ կրօնական ժողովի ատենապետ ընտրուեց, բայց այդ պաշտօնն է, երկար չկարողացաւ վարել, որովհետև, ինչպէս հեգնօրէն ասում է հանգուցեալ Պարոնեանը, այնպիսի հակասական վճիռներ արձակեց, որ ամենքին զարմացրեց.

Ի՞նչ էր դորա պատճառը: Դորա պատճառը, մեր կարծիքով, նորա անձի այն երկուորութիւնն էր, որ ամեն մի սուր գիտողի աչքին էր ընկնում: Նորա մէջ կանացի մեղկութիւն կար, նորա բնաւորութեան մէջ մի տեսակ թեթեութիւն, մի տեսակ, եթէ կարելի է այսպէս տաել, մակերեսոյթականութիւն էր երկում. նա վերին աստիճանի փառասէր էր, ցուցամոլ էր, և, որ գլխաւորն է, նորա մէջ դոքտ, այդ լատկութիւններն այնքան զարգացած էին, որ չէին կարողանում ծածկուել, թաքնուել նորա արտաքին կեղևի, հոգևորականութեան լրջութեան, ծանրակշռութեան դիմակի և կրօնաւորի սքեմի տակ: Նոր պանուում, զարդարուում էր, առատութեամբ գործ էր ածում զանազան հոտաւէտ օճանելիքներ և ջրեր, ինչպէս մի պչրոտ կին, նա հասարակութեան մէջ հարուստների սալօններում իրան այնպէս էր պահում, որ, կարծես, նազանք ծախող մեծաշուք օրիորդներից մէկը լինէր և ոչ մի համեստ հայ վարդապետ: Պատմում են, որ Խալիբեան դպրոցում, երբ նա իւր սենեակում իւր արդ ու զարդն էր անում և մազերի սանրուածքն էր լարդարում, աշակերտներից մէկը միշտ ներկայ էր գտնուում և երկար ու բարակ նորա միլութիւ ձարերն էր կարգի բերում. պատմում են նոյնպէս, որ նորա սպիտակեղէնը, վերարկուները և զգեստի միւս մասերը, որ նույըը կտաւից ու մետաքսեղէնից է եղել կարուած-պատրաստւած, այնքան շատ, այնքան բազմատեսակ է եղել, որ նորա թէոդոսիալից այնպէս անակնկալ կերպով մեկներուց յետոյ, արդէն արկդարկդ նորա լետեկից են ուղարկել: Նորա աշխար-

Հասկրութեան ցանկութիւնները, հակումները, որոնք նորա անձի մեղկութեան հետևանքն էին, նորա մէջ այնքան վառ են եղել, որ չի կարողացել ծածկել նոցա ոչ թէ միայն ալն շրջանից, որի մէջ նա միշտ լինում էր, հասարակութիւնից, որի մէջ նա գործում էր, ալլ և Հայկազեան և Խալիբեան դպրոցների սանեցից, որոնց ուսուցիչն ու դաստիարակն է եղել: Թէոդոսիալում, ինչպէս ասացինք, նա լաճախ գիշերները դպրոցում չէր անցկացնում, որտեղ դանւում էր նորա ընակարանը, ալլ քաղաքում. նա ստէպ ստէպ դպրոցի կառքով զբոսանքի էր դուրս գալիս քաղաքի շրջակարգը զանազան շատ էլ բարի համբաւ չվայելող ընկերութիւնների հետ, և ալլն և ալլն: Այս բոյորը, ի հարկէ, այնպիսի լատկութիւններ էին, որ չէին կարող չխրտնեցնել և չսառեցնել հասարակութիւնը նորանից, բայց ամենազլիսաւորը, որ ստիպում էր ամենքին երես դարձնել նորանից,—այդ այն էր, որ նորա խօսքերի ու գործերի մէջ ամենևին նմանութիւն չկար: Նա իբրև դաստիարակ աշակերտներին լաճախ հայրական խրատներ էր տալիս, բարոյականի դասեր էր կարդում, բայց ինքը նոյն իսկ աշակերտների աչքի առաջ ոչ մէկն էլ իւր ասածներից գործով չէր արդարացնում. նա իբրև վարդապետ և եպիսկոպոս լաճախ քարոզում էր եկեղեցիներում և, պէտք է ասել, լաւ էր քարոզում, գրաւիչ կերպով էր խօսում, զգացմունքով էր վարդապետում, բայց կեանքի մէջ իւր անձնական կենդանի օրինակով իւր ալդ քարոզները չէր իրագործում:

Խորէնն իւր ամերոջ կեանքում միայն երկու անգամ իւր բնաւորութեան ու խառնուածքին լարմար պաշտօն ստանձնեց և լաջողութեամբ կատարեց: Առաջինը Դէորդ Դ. կաթուղիկոսի ընտրութեան ժամանակն էր, երբ նա 1867 թուին եկեղեցական պատգամաւոր կարգուելով, ուղեկցեց նորընտիր կաթուղիկոսին Ս. Էջմիածին: Այդ ժամանակն էլ հէնց նա երջանկալիշատակ ուսումնասէր կաթուղիկոսից եպիսկոպոս ձեռնադրուեց, ճանապարհորդեց նորա հետ Ռուսաստանի հայրանակքաները և վերադարձաւ Պօլիս: Երկրորդը Ռուսաճակական պատերազմի վերջանալու միջոցումն էր, երբ

Նա 1878 թուին ուղարկուեց իբրև ազգային նուիրակ Բերլինի վեհաժմողովը և այնտեղից էլ նոյն պատուիրա. Կութեան պաշտօնով այցելեց Պետերբուրգն ու Մոսկուան: Մենք հենց այդ ժամանակ առիթ ունեցանք նորան տեսնելու: Մի կիւրակի օր էր, լուր էր տարածուել, թէ Խորէն Նարպէլը Պետերբուրգից եկել է Մոսկուա և պիտի պատարագ մատուցանէ եկեղեցում, ուստի և մայրաքաղաքի համարեա ամբողջ հայ գաղութը շտապել էր եկեղեցի, լցուել, խոնուել էր եկեղեցու գաւիթն ու ընդարձակ բակը: Ասեղ ձգելու տեղ չկար. պատարագը հանդիսաւոր էր և պատուիրակ սրբազանը եպիսկոպոսական ճոխ զգեստներով պաճուճութ և երկճղի խորը գլխին դրած կատարում էր ս. Խորհուրդը տաճկահայ հոգեւորականներին յատուկ ձեռվ ու եղանակով: Սեղանի վերալ դրուած էր մի զարդարուն բազկաթոռ, որի վերալ երեխմն բազմում էր եպիսկոպոսը: Պատարագի վերջում սրբազանը մի խորհրդաւոր քարոզ խօսեց, բնարան ընտրելով «Օն արիք գնասցուք աստիհ խօսքերը»):

<sup>6)</sup> Խորէն սրբազանը Մոսկուայում եղած միջոցում, պյցեց եկեղեցիները և Լազարեան Ճեմարանը, Համոլեց հայ գաղութի երեխիներին, հանգանակութիւն բանալու և նիւթականապէս օգնելու Ձեյթունցիներին և իրան հանդիսաւոր ճաշտալու համար հաւաքուած 800 ռուբլի գումարը, փոխանակ ճաշի, ինդրեց յատկացնել Պոլսի ազգային մատենագարանին:

Պ. Գր. Խո- Մոսկուայից գրած իւր թղթակցութեան մէջ, որ տպուեց «Մշակի» 1878 թուի 175 համարում, առաջ բերեալով՝ նար. Բէյի բարողից մի ընդարձակ հատուած, չգիտենք, ի՞նչ պատճառով չի իշել նորա բարողի գլխաւոր բնաբանը, որ հենց քարոզի գլխաւոր աղն էր կազմում: «Օ՞ն արիք երթիցուք աստիհ խօսքերի իմաստը և դորա գործադրութիւնն այդ ժամանակները ծանկահայոց գործերի գլուխ կանգնած մարդկանց մասած մունքի գլխաւոր առարկան էր: Տես այդ մասին «Պոլսի ազգային ժողովի նիստը», «Ս. Պատրիարքի նախագահութեան ճառը» և յատկապէս «Ս. Պատրիարք հօր ատենախօսութիւնը», առանցից առաջինը տպագրուած է «Մշակի» 1878 թուի 133 համարում, երկրորդը՝ 141 համարում և երրորդը՝ 159 համարում:

Ուկ մի հոգեսորականի բերանում, որ իւր բոլոր կեանքն անց էր կացրել հալրենիքից դուրս և նոյն իսկ միշտ հրաժարուել էր պաշտօնով մինչև անգամ գաւառներն երթալու, մի փոքր տարօրինակ էր հնչում «Օն արիք գնասացուք աստի» խօսքերը հալրենիքից չգաղթելու, հալրենիք վերադառնալու իմաստով, բայց և այնպէս նորա քարոզը մեծ տպաւորութիւն ծողեց: Նա ազատ էր խօսում, չէր ճամճմում բառերը, լաւ էր զարգացնում, ամփոփում իւր խօսքի միտքը և կարողանում էր իշխել իւր ունկնդիրների եթէ ոչ մտքի, գոնէ, նոցա սրտի ու երեակայութեան վերայ, այնպէս որ ամեն մի անհատ, որ չէր ճանաչում քարոզին, որ անձանօթէր նորա կեանքի հանգամանքներին, կրափշտակուէր նորա խօսքերից: Տպաւորութիւնն այնքան զօրեղ էր, որ պատարագը վերջանալուց յետով էլ, զեռ ժողովուրդը չէր ցրուում, այլ խոնուած եկեղեցու բակում, սպասում էր եպիսկոպոսի գուրս գալուն, և, երբոր նա գուրս եկաւ, բոլորեքեան յօժարակամ մերկացրին իւրեանց գլուխները ի պատի. եպիսկոպոսին: Ելրտեղ ալդ դէպքում անկասկած ներգործողդեր կատարեց, բացի եպիսկոպոսի բարեկիրթ ձևերից ու նորա տուած քարոզի շերմութիւնից, և նորա գիտնականութեան համբաւը, որ ամեն տեղ տարածուած էր, և զլխաւորապէս այն գործը, որի անունով նա ճանապարհորդում էր Եւրոպայում և բաղխում հզօրների գուները: Ում յայտնի չէ, որ 78 թուականը Հայերիս համար յոլսերի, երազների ժամանակ էր, բայց Բիսմարկներն ու Բիկոնսֆիլդները խորտակեցին ալդ յոլսերը և պատճառ դարձան այն արեան հեղեղին, որ 95—96 թուականներին ծածկեց Տաճկահայի դժբաղդ հալրենիքը:

Ալդ ժամանակներից 11—12 տարի անցնելուց յետոյ, Խորէն եպիսկոպոսը նորից ալցելեց Ռուսաստան և պատահեց Ս. Էջմիածնում, Թիֆլիզում և ուրիշ տեղեր: Նորա ալդ ժամանակները Ռուսաստան գալու պատճառները մեզ համար անլայտ մնացին. լուրեր էին տարածուած, թէ նարապէլն ալդ անգամ եկել է ընդ միշտ մնալու Ռուսաստանում, թէ նա պէտք է նշանակուի Թիֆլիզի թեմի առաջնորդ և այլ ուրիշ շատ ալսպիսէ

քաներ, բայց դոցանից և ոչ մէկն արդարացաւ, իրագործուեց, և նա նորից վերադարձաւ Պօլիս։ Մեր ձեռքին գտնուում է հանգուցեալ Ռափայէլ Պատկանեանցի Թիֆլիսից իր Նախիջևանի բարեկամներից մէկին գրած նամակներից մէկը, որի մէջ մենք տեղեկութիւն ենք գրտնում և Խորէնի մասին, որին հանգուցեալ բանաստեղծը ծը պատահէլ էր 1890 թուի օգոստոսին Թիֆլիսում։ «Ճեսնուեցալ, գրում է նա այդ նամակում, Խորէն Նարպէի հետ։ Ուրիշ անգամ կպամամեմ նորամէն լսածներս, գաղտնաբար խօսեցանք, պարմանաւ որ ծածուկ պահեմ հաղորդած տեղեկութիւնները»<sup>1)</sup>։

1) Աւելորդ և անշահեկան չենք համարում դնել այստեղ հանգուցեալ բանաստեղծի այդ նամակն ամբողջութեամբ, բայց մի փոքրիկ հատուածից, որի տպագրութիւնը ներկայումս գետ անժամանակ ենք համարում։ «Օգաստոսի 6-ին (1890 թ.) երեկոյեան ժամը 6-ին հասայ Թիֆլիս բաւականին թուլացած ձանապարհի ցրտերից (սարերի վրայ), տօմերից (հովիտներում) և խղդուկ փոշից (ձանապարհի վրայ)։ Քոյրս Սովիան. և նորա երգուհի դուստրը Մադրագինան ինձանից մէկ օր առաջ հասել էին Թիֆլիս և իշել էին նոյն իսկ հիւրանոցում (Ծեմերի հոգերա), ուր որ ես սովորութիւն ունիմ միշտ իջնելու Այն երեկոյ բաւական զուարթ և ուրաք անցուցի, վասն զի շրջապատճ էի իմ արենակիցներով, որոնց իմ այստեղ գալը ոգեսրեց և միրտ տուաւ Հետևեալ օրը (7-ին) ինչ ասես մարդիկ եկան, ես ևս դնացի մէկ-երկու տեղ՝ Թիֆլիսը ամբողջը տեղափոխուած է կօճոռ (մեծաւ մասամբ), Պօրժօմ (նշանաւոր բանակոյ) և Մանգիս և այլ զով տեղեր՝ մասամբ իւկբ։ Թիֆլիսի տօմերը մերերի հետ համեմատութիւն ըստնին. մերերը բարեխառնուում են բամիներով. իսկ Թիֆլիսում տաք օրերը օդը միշտ անշարժ է, ճրագի բոցը (գիշերները) անգամ չի տատանում։ Յեսնուեցայ Խորէն Նարպէյի հետ (ուրիշ անգամ կպատմեմ նորամէն լսածներս, գաղտնաբար խօսեցանք, պայմանաւ որ ծածուկ պահեմ հաղորդած տեղեկութիւնները). Յետոյ մտայ Մամբրէ Ս. սենեակը (սոքա երկուան էլ կենում են առաջնորդարանում), Վերջինը կուպէր Կիւրեղի անունը տալու. ես սարսափելի քիթ ու պառնդ արի. մարդու խօսքը պաղեցաւ բերանում և բոլոր մնացած ժամանակը ակնածութեամբ էր խօսում։

Իւր կեանքի վերջին տասնեակը Խորէն եպիսկոպո-  
պոսը համեմատաբար խաղաղութեամբ անցկացրեց: Նո-  
րա անունն ալդ ժամանակները շատ էլ չէր լսում. նա  
քաշուած կեանք էր վարում, աշխատում էր հրապա-  
րակում շատ չերեւլ, շատ աչքի չընկնել, Պօլսի պար-  
բերականներն էլ, կարծես, ուզում էին նորան հանգիստ  
թողնել, այսպէս չէին քաշքառում նորա անունը, ինչպէս  
առաջ: Երբեմն միայն Պօլսից գրած թղթակցութիւննե-  
րի մէջ պատահում էին ակնարկութիւններ հանգուցեալի  
այս կամ այն արածի մասին, այս կամ այն քարոզի,  
դամբանականի առթիւ: Խորէնն ալդ ժամանակները  
քարոզչի պաշտօն էր կատարում Բէշիկթաշսւմ, նախա-  
գահում էր զանազան հանդէսները, մասնակցում էր  
հայ մեծատուն, վսեմաշուք, վսեմափայլ հանգուցեալ-  
ների լուղարկաւորութեան, դամբանականներ էր խօ-

---

Վերջինից ինչ ասես միիթարական բաներ իմացայ. և միջին  
այլց և այս, որ մեր Ա. դպրոցը չի ընկնում ծխականների բա-  
թեկորացի տակ: Սուրբ Աթոռում ինձ սպասում են և այլն:  
Ճաշերէ բացէ ի բաց հրաժարուեցայ. ես տեղով գիտեմ, որ  
հէնց կուշտքուր ուտեմ ու 2—3 դաւաթ իմեմ, հէնց տեղն ի  
տեղ շնչարսպառ պիտի ընկնեմ յեռնեմ: Այս նամակը աւարտած  
շաւարտած պիտի կօճոռ. չուեմ, որ Թիֆլիզէն  $\frac{2}{3}$ , ժամուայ  
ճանապարհ է: Քրոջս դստեր քոցէոմները, կարծում եմ, իմ  
ճանապարհորդութիւնս պիտի ժանրացնէ: Խսկ անտէր թողներ  
այդ որբերին սաստիկ խղճահարւում եմ: — Արզորումի կոտորածը»  
այստեղ հասած չէ: Ճանապարհին կորել է: Խնդրեմ Պապասի-  
նեանէն կամ Զիլինկիրեանէն առնուս և կայծակի արագութեամբ  
ուղարկես: Այժմ պիտի երթամ, ինչպէս վերը ասացի, կօճոռ  
խսկ յետոյ Ելիսավեթապոլ (Թեմուրեանին), Պաքու և այլն:  
Եջմիածին կմայ ամենավերջը: Այդ մտնում է իմ հաշուի մէջ:  
Կ. անունը այստեղ ոչ ոքին յայտնի չէ: Խսկ եթէ յայտնի է՝  
այն էլ աստանայի օջլէն: Մի քանի բարեպաշտներ նորա հա-  
մար կողկողագին պատաճա ինդրում են ինձանից, ասելով որ  
«Թող ողօրմելին մի կառը հաց ուտէ»: Ես ոչ ոքի չի սպառնա-  
ցայ ոչ վրէժ և ոչ խոստացայ գութ: Մեռելային լոռութիւն պա-  
հեցի և ամեն հարց թողի անպատասխան: Շտապում եմ, ձիերը  
եկել սպասում ենք:

սում, ճառեր արտասանում, յօդուածներ էր գըում ալս կամ այն լրագրում, և ալին և ալին, Սակայն նորա կեանքի այդ համեմատական խաղաղութիւնը նմանում էր այն անհանգիստ անդորրութեան, որ սովորաբար տեղի է ունենում բնութեան մէջ խոռվալոյց ալէկոծութիւններից առաջ։ Նորա կեանքում այդ խաղաղութեան օրերին պատրաստում էր մի ահռելի փոթորիկ, որ պիտի բարձրանար, մըրկէր նորա կեանքի և գործունէութեան հորիզոնը և չարաչար խորտակէր նորան իւր զօրաւոր հարուածների տակ։

Ժամանակները չար էին, կացութիւնը դժուար։ Մօտենում էին 96—96 թուակտների ահռելի օրերը, հանգամանքներն որոշ կերպով և ուղղութեամբ փըր թուելիք փոթորիկն նշաններ էին ցոյց տալիս։ Պէտք էր զգոյշ լինել, շատ զգոյշ։ Բայց Խորէն եպիսկոպոսն այդ զգուշութիւնը չունեցաւ, մի անզգոյշ թղթակցութիւն արտասահմանի լրագրներից մէկում, որի մէջ քննադատում էր Թուրքիոյ և նոյն իսկ փաղիշահի պալատական կարգերը, և ահա սպասելիք փոթորիկը փրթեց։ Պատրիարքը Աշըրկեանը խոտութեամբ վարուեց։ Նա զրկեց Խորէնին բոլոր պաշտօններից, բանադրեց նորան և պատուաւոր բանտարկութեան ենթարկեց, թէև մեղաւորն արդէն մեղալական տալով, քաւել էր իւր լանցանքը նորա առաջ, որի առաջ նա մեղանչել էր։ Եւ զարմանալին այն է, որ այս դէպքում հայ պատրիարք Աշըրկեանն աւելի խիստ, գտնուեց, քան թէ նոյն իսկ թուրք վեհապետը<sup>8)</sup>։

<sup>8)</sup> Խորէնի արտասահմանի լրագրներին թղթակցելու շարժառիթը պէտք է որոնել այն նիւթական միջոցների սղութեան մէջ, որից այդ ժամանակները նա նեղում է եղել։ Պէտք է առհասարակ նկատել որ Բէշիկթշի քարոզութեան պաշտօնը շատ բան չէր տալիս նորան, որովհետեւ հաստատ ոռձիկ չկար, այլ միայն պատահական եկամուտներ, որ նա ստանում էր այս կամ այն մեծատան ընտանիքի մէջ կատարուող կրօնական ծիսակատարութիւններին մատնակցելուց։ Հասկանալի է, որ Խորէնի պէս մարդուն, որ սովոր էր լաւ ապրել, այդ եր-

Այս ողբերգութեամբ վախճան է դրւում Խորէնի ոչ միայն գործունէութեան, այլև նոյն իսկ նորա կեանքին։ Ճիշտ է, դորանից յետոյ էլ նա մի քանի ամիս

բեմական եկամուտները բաւականութիւն չէին տալիս, ուստի և նա աշխատում էր իւր նիւթականի պակասը լրացնել կողմակի եկամուտներով։ Նորա հայկական գրական վաստակները և հայ լրագրներին աշխատակցելը, յայտնի բան է, նորան ոչ մի շահ չէին տալիս, մնում էր նորան աշխատակցել արտասահմանի լրագրներին, որոնք և լիտկատար կերպով վարձարում էին նորա աշխատանքը։ Դորա համար նա ունէր ամեն յարմարութիւն և՝ լեզուների գիտութիւն, և՝ հետարբերական նիւթի առատութիւն, որովհետեւ ծանօթ էր մայրաքաղաքի բոլոր աղդեցիկ շրջաններին և նոյն իսկ պալատում ունէր շատ ծանօթներ ու բարեկամներ, որոնք առատ և հետարբերական նիւթ էին հառ դորդում նորան արբունիքին ներբեն կեանքից և կառավարչական շրջաններից։ Աչա այդ տեսակ թղթակցութիւններից մէկն է լինում, որ բռնում է և պատճառ է լինում նորա անկման։ Պատմում են, որ առաջնն նուագ Խորէնն աշխատում է արդարանալ Սուլթանի առաջ, ուրանալով ու ընդդունելով յօդուածի իւր զբաժը լինելը, բայց երբոր ցոյց են տալիս նորան յօդուածի բնագիրը նորա և սկական ստորագրութեամբ, նա սահպուած է լինում Խոստովանել Ճշմարտութիւնը և ներում է խնդրում վեհապետից։ Սուլթանը, որ մասնաւոր համակրութիւն է տածում եղել դէպի Խորէնը, ներում է նորան, ասելով. «Ես ներեցի, Աստուած թող դատէ։ Դատաւորի դերը, սակայն, չգիտենք, ի՞նչ իրաւոնքով, իւր վերայ է առնում Աշըկեան պատրիարքը, որ իւր «Հոչակաւոր կոնդակով» զրկում է նորան բոլոր պաշտօններից և մինչև իսկ եկեղեցու մէջ հրապարակով աղօթելու ու պատարագելու իրաւոնքից։ Զի կարելի առանց զսյույթի յիշել Աշըկեանի բռնած դիրքը Խորէնի վերարերութեամբ և այն ժամանակ, երբ բարօյապէս և նիւթականապէս ընկճուած արքեպիսկոպոսը վճռում է պատրիարքից ներում խնդրելու, խոստովանելով իւր կատարած յանցանքի ծանրութիւնը։ Ասում են, որ Խորէնն իմաց է տալիս, թէ կամենում է այդ նպատակով ներկայանալ պատրիարքին, բայց Աշըկեանը չի ուզում առանձին ընդունել նորան և ստիպում է նորան գալ խառն ժողովը և իւր ասելիքն այդտեղ ամենքի առաջ ասել

գեռ ապրում է, բայց նորա ալդ կարճատև կետնքն ինքն ըստ ինքեան արգէն մի կենդանի մահ է լինում։ Միայնութեան դատապարտուած, աշխարհից կտրուած, ամենքից մոռացուած, զրջապատուած լրտեսների մի ամբողջ ոհմակով, ապրում էր նա Բանկալթիում իւր քրոջ տանը, և կարելի է ասել, կամաց-կամաց, օրէցօր մեռնում էր։ Նետզհետէ փլատակում էին նորա լոյսերը, բաղձանքները և դորա հետ միասին կազմալուծում, քալքալում էր և նորա ֆիզիքական կարողութիւնը։ Անկումն շատ անակնկալ էր և նա չկարողացաւ դիմանալ նորա հարուածներին։ Նա շատ էր սիրում աշխարհը, որ կարողանար երկար ժամանակ նո-

Խորէնը կատարում է նորա և այդ ցանկութիւնը և խառն ժողովում ամենքի առաջ ներկայանում է նորան և աղացւմ, երնդում ներում շնորչել իրան, բաւական համարելով իւր կրած բարոյական և նիւթական տանչանքը։ «Դժացէ՛ք, սրբարան հայր, աւելացնում է նա, անօժի եմ...» և իմ անապատ գնա՛, Կոտուց անապատ գնա՛, պատասխանում է պատրիարքը։ — Սըրբական հայր, կը պաղատեմ, անապատ չեմ կրնարերթալ... Եւ պատրիարքը կատաղութեամբ հրամայում է վոնդել նորան, որ և ճշութեամբ կատարում են պատրիարքարանի բարա պանները։

Ենք կարող ասել թէ ո՞րքան ճիշտ է, բայց մենք լսել ենք, որ Խորէնի եղրայր իշեան Գուփան Լուսինեանը իւր ժամանակին բողոքել է երջանկայիշատակ Մակար կաթողիկոսին Աշըկեանի գործողութիւնների մասին։ Եւ ճշմարիտ, ի՞նչպէս և ի՞նչ իրաւոնքով Աշըկեան պատրիարքը ինքը միայն արքեպիսկոպոս լինելով գործ է գնում մի ուրիշ արք-եպիսկոպոսի վերաբերմամբ այնպիսի Փունկցիաներ, որ ինքը չէր կարող ունենալ նա իրեւ պատրիարք միայն իւր վարչական իրաւոնքներով բարձր էր միւս բարձրաստիճան հոգեորականներից, ուստի և նա կարող էր զրկել Խորէնին միայն նորա ունեղած զանազան վարչական պաշտօններից, բայց որ նա զուտ կրօնական նին վերաբերեալ իրաւոնքներ էլ բանեցնէր—զրկէր հրապարակով աղօթելու և մինչեւ իսկ պատարագելու իրաւոնքից, այդ նորա իշխանութիւնից վեր էր։ Այդ միայն և միայն ամենայն Հայոց կաթուղիկոսի իրաւոնքն է։

\* ) Համակրելով նարբէ յի գործունէութեան՝ կարծում ենք, որ առ այժմ շատ վաղաժամ է այդ աստիճան դատապարտել Պատր. Աշըկեանին. ԽՄԲ.

բանից անջատուած ապրել. նա խիստ փառասէր ու պատուասէր էր, որ կարող լինէր երկար ժամանակ փառազուրկ մնալ. միակ ելքը մահն էր և նա շուտով հասւ և ազատեց, հանեց նորան անելանելի դրութիւնից:

Հանգուցեալն ինքն էլ զգացել է, որ օրէցօր մօտենում է գերեզմանին, ինքն էլ մարգարէաբար գուշակել է, որ իւր օրհասը հեռու չէ: Դորան ապացուց կարող է լինել «Հիւանդին մըմունջը»<sup>9)</sup> խորագիր կրող ոտանաւորը, որ նա այդ ժամանակները գրել է Յակովը Գուրգէնի խնդիրքով և որ նորա վերջին գրուածքն է: Դորա մէջ նա նկարագրելով գարնան վերջանալը, ամառուալ շոգ օրերի ժամանելը, խորշակից գարնան ծաղիկների՝ մանուշակի, վարդի ու շուշանի թառամելը, աշնան մօտենալը և ծաղիկների իւրեանց բոլը կորցնելը և համեմատելով այդ բոլը իւր կեանքի հետ, հարցնում է թռչնիկին, թէ ահա մօտեցաւ աշունը, իսկ երբ որ հասնի ձմեռը, նա իրան արդեօք կենդանի կգտնի: Եւ հ. սկանալով, որ այդ չի կարող լինել, թէ նա կուզէր մի անգամ էլ անցկացնել ձմեռը և Ապրելը տեսնել, նա իսկոյն և եթ աւելացնում է, թէ սիրուն թռչնիկն երբ գարնանը գայ, մարդիկ արդէն իւր տապանն էլ մոռացած կլինեն: Բայց արդէ կարդալ ամբողջ ոտանաւորը, որ մի կողմից մեզ լիտկատար գաղափար է տալիս հանգուցեալի վերջին մտաժմունքների մասին, միւս կողմից էլ իւր մէջ պարունակած զգացմունքի տաքութեամբ ու թարմութեամբ, գրութեան ձեկի համեմատաբար անարուեստ պարզութեամբ, բանաստեղծական պատկերների ու նմանութիւնների գեղեցկութեամբ մի ամենալընտիր նմուշ կարելի է համարել նորա աշխարհաբառով գրուած ոտանաւորների:

<sup>9)</sup> «Հիւանդին մըմունջը» ոտանաւորը, որ Խորէնը գրել է Յակովը Գուրգէնի «Պատկեր աշխարհիկ գրականութեան գրքի երկրորդ հատորի համար, յիշեցնում է մեզ Millevoye-ի (1782—1816) „La chute des feuilles“ ոտանաւորը, որ թարգանուած է և հայերէն: Ցես այդ մասին և առհասարակ Խորէնի երկասիրութիւնների մասին «Տ. Խորէն Արքեպիսկոպոսնարգէլ» յօդուածը, որ տպագրուած է «Արաքս» հանդիսի 1893 թուի Բ. գրքում:

Գարնանալին սիւք ցողաթե  
 Ահա վերջին տուաւ բարեւ.  
 Ձերոտ աւուրց հասաւ խորշակ,  
 Թառամեցոյց խեղճ մանիշակ.  
 Վարդ և զուշանն լուսաթոյը  
 Ահա զանոլշ կորուսին բոյր,  
 Եւ իմ աչքեր արտասուագին  
 Հետզհետէ կը նըւաղին....:  
 Թռչնիկ իմ սիրուն,  
 Մօտեցաւ աշուն.  
 Երբ հասնի ձմեռ,  
 Ողջ զիս գըտնե՞ս դեռ:  
 Ո՞հ, ալ չունի պիրտս ո՞չ մի լոյս,  
 Մարի ճըրագ թըշուառ հոգւոյս,  
 Եւ տերևոց մէն մ'ի թօթափ  
 Կարծեմ աւուրց իմ պակսի չափ.  
 Իմ կարճ կենաց մէն մի վալրկեան  
 Քայլ մ'ալ վարէ զիս ի տապան....  
 Կըղձամ նորէն տեսնել զԱպըիլ,  
 Բայց, ոհ, կուզեմ ես դեռ ապրել.  
 Թըռչնիկ իմ սիրուն,  
 Մօտեցաւ աշուն  
 Երբ հասնի ձըմեռ,  
 Ողջ զիս գըտնե՞ս դեռ:  
 Երբ նորաբոյս գարուն զուարժ  
 Գայ ի ճակատ պըսակազարդ,  
 Պիտի կըրկնես դու հըրճուագին  
 Ըզճըուողիւն քո զառաջին.  
 Պիտի տեսնես բլուրն ու անտառ  
 Եւ ոստոստես ծառէ ի ծառ.  
 Բայց ես տի ո՞չ տեսնեմ, աւազ;  
 Ո՞չ վարդ, առուակ և ոչ քո խաղ....:  
 Թըռչնիկ իմ սիրուն,  
 Մօտեցաւ աշուն.  
 Երբ հասնի ձըմեռ,  
 Ողջ զիս գըտնե՞ս դեռ:  
 Սիրուն թռչնիկ, քիչ օրէն, ահ,  
 Յիմ սիրելեաց կը բաժնէ մահ...

Վերջին անգամ քո դալալիկ  
Ես կը լըսեմ մելամաղձիկ...  
Գուցէ քընած հողոյս վերեւ  
Ուրուր ևագուաւ սաւառնեն թեւ.  
Լըսուին բուին գուցէ եղերք,  
Ալ սըրտառուչ, ահ, ոչ քո երգ...:  
Թըռչնիկ իմ սիրուն,  
Երբ գաս ի գարուն,  
Մարդիկ զիս մոռնան...  
Ցիշէ զիմ տապան:

Խորէնի գուշակութիւնն արդարացաւ. նա ոչ թէ  
միայն չհասաւ գարնան և չկարողացաւ նորից տեսնել  
Ապրիլը, ինչպէս ցանկանում էր, ալլ ձմեռուան էլ չհա-  
սաւ. նա մեռաւ 1892 թուի աշնանը և թաղուեցաւ  
Նիշիկի գերեզմանոցում:

Հանգուցետլի յուղարկաւորութիւնը համեմատաբար  
շատ անշուք է լինում. Ականատեսներից մենք լսել  
ենք, որ կողմնակի դիտումներ չճանաչող և միայն զգաց-  
մունքով զեկավարուող հասարակ ժողովուրդն է գլխա-  
ւորապէս խոնուած գնացել նորա դագաղի յետնեկց և  
շուք տուել թաղման տիսուր հանդիսին: Խսկ նորա բազ-  
մաթիւ բարեկամներից, որոնց հետ նա այնքան տարի  
հաց էր կերել, հայ վսեմաշուքներից, էֆենդիներից,  
որոնց սալօնների զարդն էր եղել նա երկար ժամանակ,  
ազգային հաստատութիւնների ներկայացուցիչներից, ո-  
րոնց հետ նա գործել էր նոյն ասպարիզում, բարձր  
եկեղեցական դասից, որոնց հետ նա իբրև հոգեւոր եղ-  
բայր միշտ լարաբերութեան մէջ էր եղել, նորա բազ-  
մաթիւ աշակերտներից քչերը, շատ քչերն են գտնուել,  
որ հօգու ալնքան արիութիւն են ունեցել, որ մի կողմ  
թողնելով բոլոր կողմնակի դիտումները, մասնակցել են  
լուղարկաւորութեան և այդպիսով իւրեանց բարոյական  
պարտքն են հատուցել հանգուցեակի լիշտակին: Պատ-  
մում են, որ գոքա, ալդ քչերն էլ, որ համարձակու-  
թիւն են ունեցել ուղեկցելու հանգուցեալին մինչև  
գերեզմանոցը, այնպէս են պահում եղել իրանց, որ  
կարծես, ուզում են եղել, թաքնուել, պահուել, որ  
ոչ ոք նոցա չտեսնէ ու չիմանայ, որ նոքա ընդհանուր

Հոսանքին հակառակ են գնացել: Այդ դէպքում, ի հարկէ, ոչ պակաս դեր են խաղացել և ժամանակի ու տեղի քաղաքական հանգամանքները չէ որ ով որ մասնակցէր կամ մի որ և իցէ բանով իւր համակրութիւնը ցուց տար հանգուցեալին, կարող էր անքարեմիտ համարուել թիւրք կառավարութեան առաջ<sup>10)</sup>:

Ո՞հ, Աստուած մի արասցէ, որ մեր մէջ մէկն իւր բարձրութիւնից վալը ընկնի — հարստականն աղքատանար, բարյական համարուածը մի որ է բանում անբարյական նկատուի, պատիւ ու լարգանք վայելողը մի որ և իցէ սխալ քայլով լանկարծ զրկուի պատուից ու լարգանքից: Ամենքը, ամենքը, մինչև անգամ և նոքա, որոնք ընկածի ոտքին չարժեն, այդ ժամանակ գլուխ կբարձրացնեն, կաշխատեն ինքեանք էլ աքացի տալ, ցեխի մէջ թաթախել, հողին հաւասարեցնել: Հաւանական է, որ հէնց ալդպիսիներին է ի նկատի ունեցել իւր վերոյիշեալ մահագուշակ բանաստեղութեան մէջ հանգուցեալը, երբ աօել է թռչնիկին.

Սիրուն թռչնիկ, քիչ օրէն, ահ,  
Ցիյս սիրելեաց կը բաժնէ մահ...  
Կերջէն անգամ քո դալլալիկ  
Ես կը լըսեմ մելամաղձիկ...  
Գուցէ քընած հողոյս վերեւ

<sup>10)</sup> Նար-քէյի դագաղի վերայ չի դրուում ոչ մի պատկ, չի կարդացուում ոչ մի դամբանական, մինչև իսկ նորա մահուան և յուղարկաւորութեան ժամանակի մասին ծանուցում ևս չի լինում լրագրներում, այնպէս որ ժողովրդի մեծ մասն այդ բոլորն իմանում է միայն այն ժամանակ, երբ ամեն բան վերջանցած է լինում և երբ Շիշիկի զերեզմանոցի մի աննշան անկիւնում հասարակ փայտէ խաչով մի նոր թումբ էլ է աւելացած լինում: Յուղարկաւորութեան մասնակցում են գլխաւորապէս Քերայի թաղեցիք, որոնց մատուռում հանգուցեալն իրաւունք էր ստացել մասնաւոր կերպով աղօթելու իւր ընկած օրերում: Խորէնի անկման, դատապարտութեան և մաշուան յասմին տես «Մահ 8. Խորէն Նար-պէյ արք-եպիսկոպոսի» Խորագրով թղթակցութիւնը Պոլսից, որ տպուց «Արաքս»-ի 1892 թուի երկրորդ գրքում:

Ուրուր ւագուաւ սաւառնեն թե.

Լըսուին բուին գուցէ եղերք,

Ալ սըրտպուչ, ահ, ոչ քու երգ....:

Նա, որ իւր այդ ընկած օրերին լաւ էր տեսնում  
պատրիարքի և միւսների — Ուրուրների, ազնաւների և  
բուերի դէպի ինքը բռնած դիրքը, հաւանական է, որ  
հեշտութեամբ էլ կարողանար գուշակել և նոցա բռնե-  
միք դերքը և վերաբերումը դէպի իւր լիշտակը և իւր  
մահից լետոյ՝<sup>11)</sup>:

### Գլուխ Գ.

Մենք ասացինք, որ Խորէն Գալֆայեանն իւր գրա-  
կան կեանքի բոլոր ընթացքում Վիկտօր Հիւգոյի և գըլ-  
խաւորապէս Լամարտինի հետևողը և խոնարհ աշակերտն  
եղաւ, Արդ, ով էր Լամարտինը, ինչ ուղղութեան  
էր հետևում և ինչ ազգեցութիւն ունեցաւ նա իւր  
հայ աշակերտի վերալ:

<sup>11)</sup> Գրելով այս կենսագրական ակնարկը, մենք յաւակ-  
նութիւն չենք ունեցել ներկայացնելու Խորէն Գալֆայեանի  
կեանքի ամբողջ պատկերն իւր բոլոր մանրամասնութեամբ:  
Այդ ոչ մեր նպատակն է եղել ոչ էլ դորա համար մենք մեր  
ձեռքի տակ ունեցել ենք հարկաւոր նիւթերը Մենք միայն  
կամեցել ենք դորանով մէջ բերած լինել հանգուցեալի կեանքի  
դիմաւոր կէտերն իրեւ բացատրական կամ օժանդակ հանգա-  
մանք, որովհետև առանց դորան նորա հասարակական և գրա-  
կան գործունէութիւնից շատ բան անհասկանալի կմնար մեր  
ընթերցողների համար: Այդ համառօտ կենսագրական ակնարկը  
կազմելու համար, մենք ի միջի այլոց, օգտուել ենք, նաև, «Յա-  
ւելուած ի վերադարձն» վերադարձ և չորրորդին՝ Տափլիս. Եւստիւս և այլ գործունէութիւնից շատ բան անհասկանալի կմնար մեր  
ընթերցողների համար: Փարիզ 1858 թ. գըլ-  
քոյկից, երկրորդ, «Արք-եպիսկոպոս Խորէն Նար-բէյ, Հայոց  
պատղամաւոր Պետերբուրգում» կենսագրական յօդուածից, որ  
տպագրուեց «Մշակ լրագրի 1878 թուի 92 և 93 համարնե-  
րում, թարգմանուելով „Տափլիս. Եւստիւս”-ից, և, երրորդ,  
«Խորէն Արք-եպիսկոպոս Նար-բէյ» յօդուածից, որ տպուց  
«Արձագանք» լրագրի 1893 թուի 6 համարում, թարգմանուե-  
լով „Echo Contemporain”-ից:

Ալֆոնս.Մարի-Լուի-Դէ Լամարտինը ֆրանսիայի բեղմնաւոր հեղինակներից և աշխարհահոչակ բանաստեղծներից մէկն էր: Նա ծնուել էր 1790 թուի Դեկտեմբերի 21-ին Մակոնում: Նորա ընտանիքը թէև իշխանական ծագումն չունէր, բայց ֆրանսիայի պատուառը, հին, հարուստ տոհմերից մէկն էր: Նորա պապը 1789 թուին բնակութիւն էր հաստատել Մակոնում, ձեռք էր բերել բազմաթիւ կալուածներ և փարթամ կեանք էր սկսել վարել, շրջապատելով իւր ընտանիքը իշխանական տոհմերին վայել կեանքի լարմարութիւններով, խնամքով ու հոգացողութեամբ: Երեք որդի ու երեք աղջկի է ունեցել նա: Աղջկները մտել են կուսանոց, որդիներից անդրանիկը չի ամուսնացել, երկրորդը հոգևոր կոչման է նուիրել իրան, մնացել է կրտսերը, մեր բանաստեղծի հայրը, որ ամուսնացել է Օրլեանի արքայազնի տան և կալուածքի կառավարչի դստեր օրիորդ Ալիսա Դերուալի հետ: Մեծ-լեղափոխութիւնն աւրիշ շատ ազնուական ընտանիքների հետ միասին հարուածել է և այդ ընտանիքը, բանտարկութեան ենթարկելով նորա բոլոր անդրամներին, բացի բանաստեղծի մօրից և ապագայ բանաստեղծից, որ այն ժամանակը փոքրիկ, օրորոցի երեխայ է եղել: Թէպէտ այդ բանտարկութիւնն երկարատև չի եղել, որովհետև նշանաւոր Բոբեսպիերի անկումը շուտով ազատել է բանտարկեալներին կապանքներից և վերադարձրել է նոցա իւրեանց տոհմական լարկի տակ, բայց գորանից լետու բանստեղծի պապը և տատը շատ չեն ապրել. նոքա գորանից մի քանի տարի լետու մեռել են, թողնելով իւրեանց զաւակներին ահագին կարողութիւն: Կալուածները բաժանուել են ժառանգների մէջ և բանաստեղծի հօրն ընկել է Միլիլ կալուածքը, որի վերայ նորա հայրը ժամանակի ընթացքում աւելացրել է և մօտը գտնուած Saint-Point կալուածքը, որտեղ և Լամարտինը քաշուած ապրում է եղել իւր ծերութեան ու ընկած ժամանակները, որտեղ և նա 1869 թուի Փետրուարի 28-ին մեռել ու թաղուել է:

Փոքրիկ Լամարտինը, որ անդրանիկը և միակ արուզաւակն է եղել իւր ծնողների, իւր մանկութեան օրերն

անցնում է իւր հայրենի լարկի տակ, շըջապատուած իւր վերին աստիճանի բարոյական նուրբ զգացմունք-ներով օժտուած մօր խնամքով ու հոգատարութեամբ և խաղալով իւր հինգ քոլրերի հետ Տաս տարեկան հասակում նորան հօրեղբայրների ցանկութեամբ տալիս են Լիոնի պանսիօններից մէկը, լետոյ հանելով այնտեղից, ուղարկում են հէլլէի կոլեցը, որ հիմնել էին ճիզուիտները և որոնք ստիպում էին իւրեանց աշակերտներին և բոլոր շըջապատողներին կոչել իրանց «Հաւատքի հայրեր»։ Ալդաեղ նա մնում է չորս տարի և 17 տարեկան հասակում լաջողութեամբ աւարտելով իւր փոքրածաւալ ուսման ընթացքը, վերադառնում է տուն, չիմանալով, թէ կեանքի ո՞ր ասպարէզն ընտբէ, բնչ գործի նուիրէ իրան, բնչով զբաղուի։ Նորա հօրեղալրները, որոնց պատկանում էր տոհմական կարողութեան մեծ մասը և որ, ի հարկէ, իւրեանց մահից յետոյ պէտք է ալդ բոլորը թողնէին նորան և ալդ պատճառով էլ հէնց իրանց իրաւունք էին համարում իւրանուելու նորա ուսման գործին և ղեկավարելու նորա առաջին քալերը կեանքում, արգելում են նորան ծառայութեան մտնել և ծառալել բոնապարտին։ Նոքա այն աւանդապահ արքայականներից էին, որոնք ամբողջ հինգ տարի սպասում, չէին կորցնում իւրեանց լուսերը, որ շուտով կանցնեն յեղափոխութեան ժամանակները և նորից կվերահաստատուեն նախկին կարգերը։

Ամբողջ չորս տարի նա մնում է անգործ Մակոնում և Միլյում և ալդ բոլոր ժամանակը նա նուիրում է ընթերցանութեան, որով և նա կամենում է լրացնել մի կողմից իւր ուսման պակասը, միւս կողմից էլ լցնել իւր պարապ ժամանակը։ Նա թէև կարգում է անկարգ, անսիստեմ, ինչ որ ընկնում է ձեռքը, բայց արդէն ալդ ժամանակները հէնց նորա կարդացած ալդ գրքերի ազգեցութեան ներքոյ որոշուում է նորա ուղղութիւնը, պարզուում են նորա հակումները, նորա ճաշակը և գրւում է նորա ապագայ գրական ստեղծագործութեան հիմնաքարը Կրօնական գրքերից նա կարգում է Աստուածաշունչը, հին դասական հեղինակներից Վիրգիլիսսը, Օվրատիսսը, Տիբրուլլոսը, Պրոկերպիսսը, նոր

Հեղինակներից. Օսսիանը, Արիոստօն և Տասսօն, Փրանսիական հեղինակներից. Մոլիերը, Բուալոն և մանաւանդ Վոլտերը, Ժան Ժակ-Ռուսսօն, Ստալը, Շատոբրիանը, միով բանիւ այն բոլոր հեղինակները, որոնք ծլ գարի մտաւոր կեանքի պարագլուխներն էին և որոնց մտքի համագումար ոյժով առաջ էր եկել և լեզափոխութիւնը: Բաղդաւոր աստղի տակ էր ծնուել Լամարտինը. բարեկեցիկ ընտանիք, որ անկարօտ կերպով, կարելի է ասել, շքեղութեամբ և աւելիքով լրացնում էր նորա կեանքի բոլոր պէտքերը, սիրող, նուրբ զգացմունքներով, զարգացած, կիրթ ճաշակով մալր, որ տուել էր իւր որդուն իւր այդ ներքին բոլոր լատկութիւնները, և, որ գլխաւորն է, բարեպատեհ դարագլուխ, լաջող ժամանակներ —ահա այն գործօն ոյժերը, որոնք լառաջ են բերում ստեղծագործող Լամարտինին:

Ֆրանսիական մեծ լեզափոխութեան և դորան անմիջապէս լաջորդող տարիներն էին: Եւրոպալում ապրող մարդկութեան գոյութեան և կեանքի ու կեցութեան գլխաւոր արգելառիթ պայմանները, որոնք մինչև այդ ժամանակները արգելք էին լինում լառաջադիմութեան և կապում, կաշկանդում էին մարդկութեան ձեռքերը, քանդուել, փլատակուել, վերանորոգուել և լեզաշրջուել էին գէպի լաւը: Քաղաքական բռնութեան, իշխանութեան կամայականութեան տեղ բռնել էր ազատութիւնը, կրօնական խաւարամտութեան, պապական բռնակալութեան փոխարինել էր մտքի, խզճի և համոզմունքի համարձակ արտալայտութիւնը, տոհմական ազնուականութեան նիւթական և բարոլական տիրապետութիւնը տեղի էր տուել բուն ժողովրդի աշխատանքի, բնական կարողութիւնների և մտաւոր ընդունակութիւնների առաջ, իսկ այդ բոլորը միասին լառաջ էին բերել մտաւոր լառաջադիմութիւն, լուսաւորութիւն ամենաընդարձակ հոսանքներով, մի խօսքով ամուր հիմք էր բռնել և սկսել ծաղկել, բարգաւաճել ու լառաջ գնալ այն երոպական քաղաքակրթութիւնը, այն երոպական կուլտուրան, որ այժմ ընդհանրութեան է պատկանում, որով ալժմ պարձենում է բոլոր մարդկութիւնը:

Ֆրաննիական ալդ մեծ յեղափոխութիւնը թէև սկսուելով Ֆրանսիայում, սահմանափակուած չէր մնացել միայն Ֆրանսիայում, թէև ալդ մեծ շարժման հասանքները դուրս գալով Ֆրանսիայի սահմաններից զանազան շառաւիղներով տարածուել էին Եւրոպայի զանազան կողմերը և ամեն տեղ սփռել իւրեանց ազգեցութիւնը, բայց բնականապէս նա ամենամեծ զարկը և ցնցումը տուել էր բուն Ֆրանսիային։ Ալդուեղ ամեն բան տակն ու վերալ էր եղել և հինը հիմնայատակ եղել, քայլայուել ու լուծուել։ Լիւդուիկոսների բռնակալական իշխանութիւնն անդարձ կերպով վերջացել էր, պապականութեան և հօգևորականութեան ազգեցութիւնը ժոռուացել, իշխանութիւնը ջախջախուել, գլուզոներն ու գիտութիւնն աշխարհականացել և դուրս եկել եկեղեցու խնամակալութեան տակից, ազնուականութիւնը տարրալուծուել և նորա մեծամեծ կալուածները մաս մաս բաժանուել և երկրի հարստութեան հետ միասին ընդհանուր սեփականութիւն գարձել, ժողովուրդն առաջ եկել և բուրժուազիան կամ, ինչպէս ասում էին կիլկեցիք, բուրժէս-ը մեծ նշանակութիւն ստացել, պալատական գրականութիւնը, լեզուի չորութիւնն ու ցամացութիւնը, գրական երկերի անբովանդակութիւնը, գրելու ձևի ու եղանակի փքուած-ուռածութիւնը, արուեստականութիւնը և հին դասականի նմանողութիւնը, միով բանիւ կեղծ-կլասիքական ուղղութիւնը տեղի էր տուել ժողովրդական գրականութեան, հօգու, սրտի և զգացմունքի գրականութեան առաջ, ուռանատիք կոչուած ուղղութեան առաջ։ Ճիշդ է, յեղափոխութեան տաքութեան, սուր բնաւորութեան ժամանակներն երկար չեն տեսում և նոցա շուտով լաջորդում է Ռեստորանիօն յեղափոխտկան կարգերի դէմ, բայց ալդ ուեստուրասիօնը կամ վերականգնումը իւր ընդդիմազարձութեան հետ միասին չպէտք է հասկանալ վատ մտքով, հին կարգերին վերադառնալու, յետադիմելու մտքով, ոչ, այլ յեղափոխական չափազանցութիւնները, անհարթութիւնները լարդարելու, չափաւորելու մտքով։ Յեղափոխութիւնն այնպիսի զարկ էր տուել, այնպիսի ջախջախիչ

կերպով կործանել էր հինը, որ այլ ևս խօսք չէր կարող լինել հնի նոյն ձևով վերականգնման մասին. նոյն իսկ ռեստաւրատորի ոնի և ուշակսիօնի պարագլուխները, որոնք բոլորեքեան ևս մեծացել, սնուել էին լեղափոխութեան ուսմունքով, տոգորուած էին լեղափոխական գաղափարներով, չէին կամենում, չէին կարող այլ ևս հին կեանքով ապրել, հին եղանակով կառավարուել, հին ռեժիմով զեկավարուել: Թագաւորական իշխանութիւնը վերահաստատուեց, բայց ալդ արդէն Լիւդուիկոսների այն թագաւորութիւնը չէր, որ կարողանար ամենքին իրան գերի դարձնել, ամենքին ճնշել և մինչև անգամ հպատակների հոգու, սրտի և մտածութիւնների վերալ թագաւորել. եկեղեցու սրբութիւնը նորից իւր արժանաւոր տեղը բռնեց, բայց ալդ արդէն նախկին պապական հոգի, միտք և ամեն լուսաւոր գաղափար կաշկանդող կաթոլիկ եկեղեցին չէր, մի խօսքով լեղափոխութեան առաջ բերած գլխաւոր, էական հիմունքը, սկզբունքը հաստատ մնացին և միայն փոխուեցին մանրամասնութիւնները, ոչ էականները, արտաքին ձևերը:

Պատահականութիւնը, բաղդի բերմունքը, թէ ժամանակակից հանգամանքների գաղափարների, ձկտումների համագումարը ալդ ժամանակները յառաջ են բերում մի շարք ընդունակ, քանքարաւոր հեղինակներ, որոնք իւրեանց մտքի կորովով, գրչի ոյժով ընդհանրացնում, մարմին և արիւն են դարձնում ժողովրդի մէջ չափաւորուած ձևով լեղափոխութեան գլխաւոր սկզբունքները: Ինչ ասել կուզի, որ գոյա ազգեցութիւնը գլխաւորապէս զգալի է լինում գրականութեան զարգացման վերալ, որ սկսում է արագ ու հսկայական քալլերով առաջ գնալ և համաշխարհական հոչակ ստանալ: Քարքարում են կեղծ-կլասիքական ուղղութեան վերջին բեկորները և ռոմանտիզմը հետզետէ այնքան առաջ է գնում ու զարգանում, որ երեսնական թուականներին արդէն իշխող ուղղութիւն է դառնում ֆրանսիայում գրականութեան մէջ: Մտքի ու գաղափարի ալդ քանքարաւոր պարագլուխների շարքը բաղկանում է Վիկտոր Հիւգոից, կոմս Ոլֆրեդ-դէ-Վինեից, Ալֆրեդ դէ-

Սիւսէից, Թէոփիլոս Գոտիէից և միւսներից։ Ալդ նշանաւոր մարդկանց շարքից էր և Ոլֆոնս Լամարտինը։ Ի՞նչ էր ուսմանտիզմը և ինչով էր տարբերութեան կան կեղծ դասական ուղղութիւնից։ Ուսմանտիզմը գրական ուղղութեան այն տեսակն է, որի մէջ գերիշխող գեր է կատարում քնարերգութիւնը, որ իւր հերթով ոչ այլ ինչ է, եթէ ոչ անհատականութեան արտայայտութիւնը։ Անհատականութիւնն էլ արտայալտուում է ոչ թէ այն գաղափարներում, որոնք գոյանում են մերգիտակցութեան մէջ, այլ որ ստեղծագործուում, առաջէ գալիս մեր զգացմունքի, մեր հոգու ու սրտի ելեէջների մէջ։ Ալդպիսի, ալսինքն մեր հոգու ու սրտի մէջ երևան եկած անհատականութիւնն արտայալտուում է կամ մեր զգայարանների մէջ, կամ սիրոլ, լոյսի, ատելութեան, թախիծի, լուսահատութեան և մելամաղձութեան ձեռով։ Մեր զգայարաններից՝ մի քանիսն ալնպիսի նիւթ են տալիս մեզ, որ նորանից մեր գիտակցութեան մէջ մտապատկեր է գոյանում արտաքին աշխարհի կամ տիեզերքի մասին, միւսները ալդ նիւթը չեն մտակարարուում մեզ։ Ուսմանտիք հեղինակներն իւրեանց երկերում նկարագրում են կամ պատկերացնում են գլխաւորապէս միայն մարդուս ներքին զգացմունքները և բնութիւնից ստացած տպաւորութիւնները, միւս բոլորը, ինչպէս, օրինակի համար, հոտոտելիքի, ճաշակելիքի և առհասարակ մարդուս մկանունքին վերաբերեալ զգայարանների պատկերացումը, նոքա թողնում են լաջորդ գրական ուղղութեան ներկայացուցիչներին—նատուրալիստներին, որոնք սկսում են իշխող դեր խաղալ ֆրանսիայում միայն վաժմանական թուականներից։ Ուսմանտիքների քնարերգութիւնը սանտիմենտալ բնաւորութիւն ունի և հարուստ կամ առատ է նկարչականութեամբ։

Ուսմանտիզմը տարբերուում է դասականից գլխաւորապէս նորանով, որ չի ընդունում այն կանոնները, որոնք մի տեսակ սրբագործուած օրէնքների գեր էին կատարում դասականութեան մէջ։ Դասականը պահանջում էր, նախ, որ գրական երկերի զանազան տեսակները, որոնք միմեանց հետ ոչ մի կապ, ոչ մի ընդհանուր ա-

դերս չունէին, ճշգիւ սահմանուեն. երկրորդ, նա պահանջում էր, որ գրական երկերի ամեն մի տեսակի օրէնքները, որոնք ձևի կամ տիպի միատեսակութիւնը գերազասում էին բնաւորութիւնների բազմատեսակութիւնից, հաստատ կերպով որոշուած լինեն և, վերջապէս, երրորդ, նա պահանջում էր ճաշակի պարմանականութիւն, որ սահմանափակում էր հեղինակի իւր գրուածքի համար թէ ազատորէն նիւթ ընտրելու և թէ իւր այդ ընտրած նիւթն արտալայտելու համար զանազան միջոցներ ու եղանակներ որոնելու և գտնելու կամքն ու ձգտումը:

Ուոմանտիզմն այդ բոլորը ոչնչացնում է: Ճիշդ է, նա դասականի այդ կանոններն ոչնչացնելով, մի տեսակ խառնիխուռուն, քառտիքական դրութիւն է մտցնում գրականութեան մէջ, բայց այդ լինում է միայն սկզբում. յետոյ հետզհետէ ամեն բան որոշուում, սիստեմի է բերուում, նոր, որոշ կարգ ու կանոնի և օրէնքների տակ է դրում: Նա ստեղծում է քնարերգական բանաստեղծութիւնը, նկարչականութիւն է մտցնում գրական զանազան տեսակ երկերի մէջ և, որ գլուխորն է, նա ոչնչացնում է դասական գրականութեան մէջ այնքան մեծ նշանակութիւն ունեցող ձևի ու ոճի յետեկց ընկնելը, որ մի տեսակ բովքի միջից անցնելով ամեն մի ոգեսորութիւն, զրկում էր նորան ինքնուրոյնութիւնից կամ, լաւ է ասել, ինքնատիպ առանձնալատկութիւնից. նա ոչնչացնում է արուեստակունութիւնը, մեռած ձեւերը, քարացած կանոնները, գրելու ու մտածելու սառած, կեանք ու կենդանութիւն կորցրած եղանակները, ճաշակի պալմանականութիւնը, միով բանիւ նա գրականութիւնը հանում է չոր վերացականութիւնից, տալիս է նորան հոգի, կեանք և մեծ ծաւալով բանաւտեղծական ալիւն. նա ներմուծում է գրականութեան մէջ գեղարուեստականութիւնը և, ընդհակառակը, դուրս է ձգում նորա միջից մեքենականութիւնը, շինծուութիւնը<sup>12)</sup>:

<sup>12)</sup> Ուոմանտիզմի և Կամարտինի մասին տես „История французской литературы XIX века, Г. Лансона, проф. Ecole Normale въ Парижѣ. Переводъ съ французскаго подъ редакціей П. О. Марозова“ էջ. 93—98 և 77—84.

Դասականութեան և ոօմանտիզմի մաքառման գործում մեծ դեր է խաղում նամանաւանդ լեզուն, որ իբրև մտքի արտայալտութեան գործիք մեծ խորհուրդունէր ուսմանտիզմի ներկալացուցիչների համար: Խորատակելով դասականութեան մէջ ընդունուած բոլոր գըլիսաւոր կանոնները և նոցա տեղը նորը դնելով, գորահետ միասին պէտք էր մշակել և նոր լեզու, որ հնարաւոր լինէր արտայալտել և նոր ստեղծած ձեւերը: Ալդպատճառով էլ աշակ վերոլիշեալ հեղինակները, որոնք, ինչպէս ասացինք, նոր ուղղութեան պարագլուխն էին, իւրեանց բոլոր ուշադրութիւնը դարձնում են լեզուի վերայ և աշխատում են հանել նորան այն անձուկ պայմանական շրջանից, որի մէջ զետեղել, փակել էին նորան դասականները: Ընդհանուր ոժի, եռանդուն աշխատանքի և աչքի ընկնող տաղանդի և ընդունակութեան առաջ կամաց-կամաց տեղի է տալիս դասականութեան և այդ վերջին ամենակարևոր պատուարը: Լեզուն վերակազմուում ու վերանորոգւում է: Հետզհետէ և աստիճանաբար անհետանում են գրական ասպարիզից դասական երկերի մէջ ընդունուած խօսքերի ստոր և բարձր, տղնիւ ու անազնիւ բաժանումը: Ընդունում է, որ լեզուի մէջ բոլոր խօսքերն էլ հաւասար են, բոլորն էլ ազնիւ ու բարձր են և հեղինակն անխտիր բոլորն էլ իւր ցանկութեամբ կարող է գործ ածել իւր գրուածքի մէջ: Դորահ հետ միասին անհետանում են ալլարտնութիւնների և պատկերական ոճերի սովորական դարձած առատ գործածութիւնը, որոնք մթնեցնում, աղաւաղում էին գրուածքի միտքը: Աշխատանք է գործ դրւում, որ երկի մէջ խօսքերը, ոճերը և դարձուածները համապատասխանեն ճիշդ այն առարկաներին, որոնց մասին խօսում է հեղինակը, արտայալտեն ճիշդ այն մտասլտկերները, այն գաղափարները, որ հեղինակն ուզում է արտայալտել: Բայց այս բոլորից, ջանք է լինում հարստացնելու լեզուի բառարանը, որ դասականները վերին աստիճանի աղքատացրել էին, հանելով գործածութիւնից ստոր և անազնիւ համարուած ոճերը, խօսքերը և դարձուածները Ռոմանտիզներն ամենայն առատութեամբ ընդունում են լեզուի մէջ բազմաթիւ

ժողովրդական բառեր, ամենակին հոգ չտանելով, թէ այս մէկը վալելուց է, այն մէկն ոչ, այս պատշաճ է, այն անպատշաճ, այս մէկն ազնիւ է, այն մէկը գուեհիկ, ինչպէս անում էին դասականները, միայն որ այդ բառերը ճշգիւ արտայալտէին այն, ինչ որ նոքա ցանկանում էին ասել: Լեզուի վերանորոգուելու, հարստանալու և գեղեցկանալու հետ միասին վերանորոգում, գեղեցկանում է և ոտանաւորը: Ոտանաւորի բազմաթիւ չափերի հետ միասին, որ ոռմանտիքները վերանորոգում են կամ նոր ի նորոյ կազմակերպում ու գործածութեան մէջ են մտցնում, նոքա նամանաւանդ ընդունում են ու սկսում գործածել ռազէքսանդրեան կոչուած ուժունեան ոտանաւորի չափը:

Թէ լեզուի և թէ ոտանաւորի վերակազմութեան ու վերանորոգութեան գործում սակայն ոռմանտիզմի ներկայացուցիչ ու պարագլուխ հեղինակները համտհաւասար կերպով մեծ դեր չեն կատարում: Արդարութիւնը պահանջում է ասել, որ այդ ասպարիզում առաջնակարգ դեր են խաղում Վիկտոր Հիւգօն և Գոտիէն, իսկ Լամարտինը և միւսները միայն հետեւում են նոցա, երկբորդական դեր են կատարում: Լամարտինը արդէն շատ անհոգ էր, շատ անտարբեր էր դէպի իւր գրուածների լեզուն, շատ քիչ ուշադրութիւն էր դարձնում իւր լեզուի մաքրութեան, գեղեցկութեան, իւր ոճի ու գարձուածների կանոնաւորութեան վերայ, շատ սակաւ ժամանակ էր նուիրում իւր գրուածները կոկելու, ուղղելու կարևոր գործին, որ այդ ասպարիզում կարողանար առաջնակարգ դեր կատարել:

Ի՞նչ առանձնայատկութեան տէր էր Լամարտինն երբեւ բանաստեղծ, իբրեւ հեղինակ և բնչով էր առհասարակ նա տարբերւում իւր ժամանակակիցներից:

Լամարտինը նախ և առաջիւր սրտի, իւր էութեան մէջ թագցնում էր մի անչափ մեծաքանակ վիշտ և թախիծ, բայց նորա այդ թախիծը Նատորբիանի և միւսների թախիծի նման կծու և դառը չէր. նորա այդ վիշտն ու թախիծն անցնելով նորա մեղմ, նուրբ կանացի հոգու ելևէյներից, փափկանում ու ստանում էր այն գեղեցկութիւնը, գրաւչականութիւնը, որ բռնում է նո-

բա երկերն ընթերցողների սրտի ու հոգու ամենանուրբ  
թելերից։ Հոգու ալդ յատկութիւնը նա ժառանգել էր  
իւր մօրից և զարգացրել իւր մանկական և պատանեկա-  
կան կեանքի սարք ու կարգի մէջ, իրան շրջապատող  
ընտանեկան հանգամանքների մէջ իւր քոլրերի ազդե-  
ցութեան ներքոյ, քոլրերի, որոնք, ինչպէս ասացինք,  
նորա միակ խաղընկերն են եղել։ Լամարտինն իւր գրա-  
կան գործունէութեան ասպարիզում շատ բեղմնաւոր է  
եղել։ Նա, բացի բանաստեղծութիւններից, գրել է և  
ուրիշ ամեն տեսակ գրուածներ՝ պատմութիւններ, կեն-  
սագրութիւններ, ճանապարհորդութիւններ և այլն, բայց  
նա տիրապէս բանաստեղծ է եղել և մեծ բանաստեղծ  
և իւր ալդ բանաստեղծական յատկութիւնը պահպանել  
է և իւր բանաստեղծութեան հետ ոչ մի կապ չունե-  
ցող գրուածներում։ Նորա պատմական գրուածքներն  
արգախի գրուածքներին յատուկ դատողութիւնների և  
պատմափաստերի լուսաբանութեան լրջութիւնը չունին.  
Նորա ճանապարհորդական տպաւորութիւնները, նկա-  
րագրութիւնները զուրկ են պատմական, աշխարհագրա-  
կան և տեղագրական ճշգութիւնից, և այլն և այլն։

Լամարտինի մեծութիւնն իբրև բանաստեղծի պէտք  
է որոնել այն անարուեստականութեան, այն բնակա-  
նութեան մէջ, որ միայն նորան յատուկ է։ Նա չի եր-  
գել իւր զուրածութեան, իւր քէֆի համար, բանաստեղ-  
ծութիւնը նորա գործը, նորա profession ծե Յօն չի ե-  
ղել։ Նա երգել է, որովհետեւ ալդ նորա հոգու պահանջն  
է եղել, նորա սրտի հառաջանքն է եղել։ Նորա բանա-  
ստեղծութիւնը, ճիշդ է, մի փոքր մշուշապաս է, մի  
տեսակ անլալտ, անորոշ բնաւորութիւն ունի, բայց ալդ  
մշուշը, ալդ մէզն ու մառախուղը, որոնք ստուերա-  
պատում են նորա ներկալացրած բնութեան տեսարան-  
ների, կուսական գեղեցկութեան, հոգու պէս-պէս ար-  
տալայտութիւնների պատկերները, այնքան թափանցիկ,  
այնքան շղարշանման են, որ բոլորովին չեն միթնեցնում  
նոցա, այլ, ընդհակառակը, պատկերները շատ գրաւէչ  
կերպով արտացոլում են նոցա, այսինքն ալդ մշուշի  
ու մէզի միջից և դորանով, իւրեանց ալդ աղօտութեամբ  
աւելի ևս հրապուրում, յափշտակում են մեր սիրտն

ու հոգին։ Այդ անորոշութիւնը, ալդ մժութիւնը, որ մենք տեսնում ենք նորա բանաստեղծութեան մէջ, առաջ է գալիս հէնց այն հանգամանքից, որ նա արտայալում է մի մեծաքանակ, մի զօրեղ զգացմունք, առանց դատողութեան և առանց փաստերի։ Նա մտածող, նա պատմաբան, նա հետազօտող չէ։ Նո զուտ, մաքուր բանաստեղծութեան ներկայացուցիչ է միայն։

Լամարտինի բանաստեղծութեան ալդ հիմնական մոտիւր, նորա հոգու տրամադրութեան ալդ էական հանգամանքը գլխաւորապէս երևան է գալիս նորա երկու գրուածքում Premières meditations և Les harmonies, որոնք, նախ, նորա բանաստեղծական գրուածքների մէջ առաջնակարգ տեղ են բռնում, երկրորդ, շատ կարևոր են մեզ Հայերիս համար, որովհետև Խորէն Գալֆայեանն ամենից աւելի բանաստեղծի ալդ երկերն է սիրել, ալդ երկերն է թարգմանել, ալդ երկերի ազդեցութեան ներքու է հեղինակել իւր ինքնուրոյն բանաստեղծութիւններից շատերը։

Premières meditations-ը, որ իւր ամբողջութեամբ լուս է տեսել տպագրութեամբ 1820 թուին, սկզբից եղել է միայն մի փոքրիկ հատորիկ, բաղկացած 26 կտոր բանաստեղծութիւններից։ յետու արդէն նա հաստացել ու ստուարացել է, երբ 1823 թուին հրատարակուել է նորա շարունակութիւնը կամ լրացուցիչ մասը «Novvelles Meditations» խորագրով։ Սակայն սկզբից հրատարակուածներն եղել և միշտ մնացել են ամենաընտիրները, իսկ յետու հրատարակուածները թէև ունեցել են իւրեանց մէջ մի քանի ընտիր կտորներ, բայց երբէք չեն կարողացել համեմատուել առաջինների հետ, հասնել առաջիններին։ Meditations ը զգացմունքի մի ամբողջ հեղեղ է, քնարերգութեան բանաստեղծութեան մի ամբողջ ծովակ, վսեմ, գեղեցիկ, թախծալից։ Ալդ բանաստեղծութիւնների մէջ չի կարելի գտնել մէկը, որի մէջ հէնց մի որոշ դաշտանկար պատկերացրած լինի կամ մի ճիշգ, ստոլգ փաստ հաղորդուած լինի, այնքան դոքա անորոշ, մշուշապատ և անլալտ են։ Առնենք, օրինակի համար, «Լե լաօ» խորհրդածութիւնը, որ ամենաընտիրներից մէկն է համարւում։ Ի՞նչ է պատկերացրած նորա մէջ—մի

նաւակ և երկու մարդ, բայց թէ ուրք են դոքա, ուր են գնում,—ոչինչ լայտնի չէ։ Մենք դորա մէջ, բացի բանաստեղծի անհուն զգացմունքից, ոչինչ չենք տեսնում, ոչինչ չենք իմանում։ Ալսպէս են նորա բոլոր խորհրդանշութիւնները։ Նոքա խսկապէս բովանդակութիւն չունին, ամեն բան նորա մէջ շղարշանման մէգով է պատաճ, ամեն բան նոցա մէջ, ինչոր միայն վերաբերում է իրականութեան, գոյութեան արտաքին ձևերին և հանգամանքներին, աներևութանում է և մնում է միայն իւր, բանաստեղծի հոգու հառաջանքը։ Եւ զարմանալին այն է, որ Լամալ տինը կարողանում է միմիայն և միմիայն խօսքերով հաստատել իւր և իւր անձանօթ ընթերցողի մէջ այն մտերմական կապը, այն միմեանց լուրթեամբ հասկանալու երևոլիթը, որ լինում է միայն երկու միմեանց շատ մօտ, շատ ծանօթ անձանց մէջ։

Les harmonies կոչուած երգերը, որոնք առաջին անգամ լոյս են տեսել 1830 թուին, զուտ կրօնական բանաստեղծութիւններ են, որովհետեւ նոցա մէջ ամեն մի տեղ կրկնում է Աստուծոյ անունը, ամեն տեղ կրօնական խորհրդանշութիւններ են լինում։ Սակայն այդ կրօնական խորհրդանշութիւնները, ինչպէս երեսում է, ամեն տեղ հաւասարապէս չեն ոգեսրել բանաստեղծին։ Երբեմն այդ խորհրդանշութիւնները քաղել են նորա գրչից ամենաընտիր ոտանաւորները, երբեմն ել նոքա ձգել են նորան ձանձրալի միակերպութեան մէջ և, փոխանակ զգացմունքի տաքութեան և մտքի հակիրճ, կենդանի արտայալտութեան, տռաջ են բերել երկարաբանութիւն ու խօսքերի կուտակումն, այնպէս որ կարելի է ասել, թէ բոլոր դաշնակները միասին առաջ կազմում են մի ամբողջութիւն կամ հաւաքածու, որի մէջ միջակ, շաջողուած և շատ յաջողուած բանաստեղծութիւնները խառնուած են միմեանց հետ, յաջորդում են միմեանց։ Թէև ինքը Լամարտինը 50 դաշնակներից ընտիր է համարել միայն 15 ը, բայց այդ, ի հարկէ համեստութիւն է։ նոցա մէջ ընտիրները, անկասկած, աւելի բազմաթիւ են, քանի՞ ոչ ընտիրները և, որ գըլ խաւորն է, այդ ընտիրների մէջ կան ալսպիսիները, ո-

ըոնք իւրեանց մէջ պարունակում են նոլ, արտաքոյ կարգի գեղեցկութիւններ, որ և առիթ է տուել շատերին նորա յարգողներից դաշնակները գերադասել նորա միւս բանաստեղծութիւններից։ նոցա, այդ ընտիր դաշնակների ոճը պարզ է և գեղեցիկ, իսկ նոցա ոճի այդ գեղեցկութեան ու պարզութեան համապատասխանում է նոցա մէջ և ամենայն պարզութեամբ, բնականութեամբ և անարուեստականութեամբ արտայալտուած զգացմունքը։

Թէև Լամարտինն իբրև գրող ալնքան հպարտ բնաւորութիւն է ունեցել, որ չի սիրում եղել մի ուրիշին հետեւել, մէկին աշակերտ գրուել, թէև նա ինքն իրեն ումանտիք չի համարել և հեռու է պահում եղել իրան դասականների և ումանտիքների պարզաբներից, թէև, վերջապէս, նորա հայեացքները քաղաքականապէս և կրօնապէս աւելի պահպանողական են եղել, քան թէ իւր ժամանակակից հեղինակների, ալնուամենալիւ նա չի կարողացել իրան ազատ պահել, չենթարկուել ժամանակի հոգուն, իրան զրջապատող գրական գործիչների ազդեցութեան։ նա կարդալով Հիւգօլի երկերը, ազդուելով ումանտիքներից, իւր ներքին աշխարհով, իւր հոգու էութեամբ էլ պատկանելով ումանտիքների շարքին, անգիտակցարար ումանտիք ուղղութեամբ գրուածներ է արտադրել, որով և ակամայ մասնակցել է դասականութեան և ումանտիզմի մրցողութեան և օգնել է վերջինին յաղթութիւնը տանելու։ Դաշնակները հէնց նորա գրուածների այն տեսակին են պատկանում, որի մէջ պարզ երևում է ումանտիզմը Հիւգօլի կոլորիտով։ Կարդանք, օրինակի համար, դաշնակներից «Եհովան», «Կաղնին» և «Մարդկութիւնը»—, և մեզ բոլորովին ակնյալու կինի այդ ումանտիզմը, այդ, եթէ կարելի է այսպէս ասել, Հիւգօլական..ւթիւնը։

Կրօնական տարրի առատութիւնն այդ գրուածքում պէտք է մեկնել, նախ, Լամարտինի ընտանեկան և գպրոցական դաստիարակութեամբ, որ զուտ կրօնական բնաւորութիւն է ունեցել, կրօնական, որ ժամանակի ընթացքում թէև շատ փորձանքների է հանդիպել, բայց իսպառ երբէք չի անհետացել նորա սրտից, երկ-

բորդ, նորա ցանկութեամբ տալու նոցա ձեռքը, որոնց սրտից յեղափոխութիւնն իսպառ չէր զնջել ճշմարիտ Աստուծոյ երկրպագութիւնը, առարկալի վսեմութեան համապատասխան մի կրօնական բանաստեղծութեան գիրք։ Բացի այդ երկու գրուածքից, մեզ համար նշանակութիւն ունի Լամարտինի և մի արձակ գրուածքը — «Արևելքի ճանապարհորդութիւնը», որովհետև նա իւր գէպի արևելք կատարած ճանապարհորդութեան ժամանակ պատահել է, յարաքերութիւն՝ է ունեցել և Հայերի հետ, որոնք ամեն տեղ սիրով ընդունել ու պատուել են նորան։ Նա այդ ճանապարհորդութիւնն արել է 1832 թուին։ Նա նաւ է մտել Մարսելի նաւահանգստում և անցել է Մալտալից, այցելել է Աթէնքը, Բէլրութը, Լիբանանը, Գալիլիան, Երուսաղէմը, Դամասկոսը, Մեսետալծովը, տնօրինական տեղերը, Բալբէկի աւերակները և Պօլսի ու Դանուբի վերայով 1833 թուին վերադարձել է Մակոն։

«Արևելեան ճանապարհորդութիւնը» թէև իւր հաղորդած տեղեկութիւնների ճշտութեան տեսակէտից նշանակութիւն չունի, թէև նա լցուած է ճանապարհորդութեան հետ ոչ մի կապ չունեցող աւելորդաբանութեամբ և թէև նա իւր ժամանակակիցներին ծանօթացնում է աւելի իւր, Լամարտինի, քան թէ արևելքի հետ, այնուամենալին շատ հետաքրքրական է։ Նորա մէջ Լամարտինը մեծ ոգեսորութեամբ, իրան յատուկ բանաստեղծական աւիւնով, կենդանի, աշխոյժ, սահուն ոճով պատմում է իր անձնական տպաւորութիւնները, մտածմունքները, իւր հայեացքները, ամեն բանի վերալ նայելով իւր անձնական տեսակէտից, բոլոր իւր տեսածներն ու լսածները յարմարեցնելով իւր տրամադրութեան, իւր հասկացողութեան և ամեն բան իւր մէջ մշակելով, բիւրեղացնելով և այնպէս արգէն ներկալացնելով իւր ընթերցողներին։ Դա իսկապէս ճանապարհորդութիւն էլ չէ, այլ իւր, Լամարտինի անձնական դատողութիւնները, փելիսոփայութիւններն իւր գէպի արևելք կատարած ճանապարհորդութեան առթիւ։

Որ իւր ճանապարհորդութեան ժամանակ Լամարտինը պատահել է Հայերի, լաւ ընդունելութիւն է գը-

տեղ նոցանից և լաւ տպաւորութիւն է ստացել, լաւ գաղափար է կազմել ընդհանրապէս նոցա մասին—, այդ երեսում է նորա ալն երկու նամակից, որ Խորէն Գալֆայեանը զետեղել է իւր գաշնակների թարգմանութեան սկզբում։ «Pendant mes voyages en Orient, aսում է նա այդ մասին իւր երկրորդ նամակում, j'ai été reçue par les Arméniens comme un hôte et comme un frère»։ Խորա այդ լաւ տպաւորութիւնը, այդ լաւ գաղափարը Հայերի վերաբերմամբ աւելի ևս զօրացել է Պարիզում, երբ նա ծանօթացել է Մուրատեան և Հայկազեան դպրոցների ղեկավարների՝ Ս. Թէոդորեանի, Գ. Ալվագեանի և Ամբրոսիոս ու Խորէն Գալֆայեանների հետ և սկսել է լաճախել այդ երկու հայկական դպրոցները, ներկայ գտնուելով դպրոցական հանդէսներին, անձամբ սրոշուած պարգևները բաժանելով առաջադէմ աշակերտներին, անձամբ խրախուսելով և մինչև իսկ ճառեր արտասանելով և գովաբանելով Հայերի լառաջադիմութեան ձգտումները։ Հէնց այդ ծանօթութեան, այդ լարաբերութեան վերայ է ակնարկում նա, երբ իւր առաջին նամակում ասում է իւր բարեկամ Խորէն Գալֆայեանին. «Mes relations fréquentes avec l'Orient m'ont inspiré un grand respect pour la nation Arméniene et surtout pour la religion la probité et la poésie de ces populations plus rapprochées que nous du berceau et des lumières du monde primitif». <sup>13)</sup>)

<sup>13)</sup> Լամարտինի մասին առանձին տես „Иллюстрированная история новейшей французской литературы А. Птиде-Жюльвиля. Переводъ съ французскаго подъ редакціей Ю. В. Веселовскаго“. Էջ. 200—267, գլուխ V.

ԵՐ. ՇՈՀԱԶԻԶ

(Կը շարունակուի)